

Գործողությունների ծրագիր

Դիլիջան քաղաքի և շրջակայքի տարածքային մշակութային համակարգերի





Communities Combining Cultures
Our Culture goes beyond the Borders


Դիլիջան քաղաքի և շրջակայքի տարածքային մշակութային համակարգերի Գործողությունների ծրագիր

Հայաստանի էկոտուրիզմի ասոցիացիա, ecotourismarmenia.com



Հայաստանի էկոտուրիզմի Ընկերակցություն
Armenian Ecotourism Association

Ուրբանլաբ, urbanlab.am/en/wethink



Երևան, Դիլիջան 2013

Ծրագիրը իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

This project is funded by the European Union



EUROEAST
CULTURE

Բովանդակություն

1. Ներածություն.....	3
Նպատակը	3
Մեթոդաբանությունը	3
Կառուցվածքը	3
2. Տարածքի ընդհանուր նկարագրություն.....	3
2.1. Դիլիջան քաղաքային համայնք	4
2.2. Գոշ գյուղական համայնք.....	4
2.3. Հաղարծին գյուղական համայնք.....	4
2.4. Հովք գյուղական համայնք	7
2.5. Թեղուտ գյուղական համայնք	7
2.6. Պատմամշակութային հուշարձաններ	8
2.7. Բնության պահպանության վիճակն ու հատուկ պահպանվող տարածքները.....	12
2.8. Տարածքի առողջարանային ներուժը.....	16
3. Նախագծի մշակման գործընթացը	18
3.1. Խնդիրների բացահայտում.....	18
3.2. Տարածական պլանավորման փաստաթղթերի վերլուծություն	19
3.3. Գործողությունների ծրագրի դրույթների քննարկում	26
4. Գործողությունների ծրագրի նկարագրություն.....	29
Հայեցակարգային խնդիրներ	29
Կառավարմանն առընչվող խնդիրներ	35
Այլ առաջնահերթություններ	43
5. Ամփոփում.....	46
5.1. Փորձնական (պիլոտային) ծրագրեր	47
Գրականության ցանկ.....	53
Հավելվածներ	

1. Ներածություն

Եվրամիության կողմից ֆինանսավորվող VIVA EASTPART Արևելյան գործընկերության տարածաշրջանում փոքր պատմական կենտրոնների արժևորում և կառավարման բարելավում ծրագրի շրջանակներում Դիլիջան քաղաքի, Գոշ, Թեղուտ ու Հովք գյուղական համայնքների (այսուհետ՝ Տարածք) տարածքում տարածքային մշակութային համակարգերի կայացման և զարգացման նպատակով ուրբանլաբ նախագծային գրասենյակը Էկոտուրիզմի ասոցիացիայի պատվերով մշակել է Դիլիջան քաղաքի և շրջակայքի տարածքային մշակութային համակարգերի գործողությունների ծրագիր:

Ծրագրի առանձնահատկություններից է այն, որ առաջին անգամը լինելով, փորձ է արվել նշված համայնքները, ինչպես նաև դրա մաս կազմող Հաղարծին համայնքը, դիտարկել որպես մեկ ամբողջություն և թե՛ խնդիրների բացահայտման, թե՛ լուծումների առաջադրման ընթացքում դրանք դիտարկել որպես մեկ միավոր:

Հատկապես ուշադրություն է դարձվել ծրագրի շրջանակում մասնակցային որոշումների ընդունմանը միտված քայլերին, որոնք ներառում են խնդիրների բացահայտում, հայեցակետային համալիր (ինտեգրված) լուծումների առաջադրում, ինչպես նաև դրանց գործադրմանը միտված կայունության ապահովմամբ լուծումներ:

Նպատակը

Այն նպատակ ունի տեղական նախաձեռնող խմբի և այլ շահագրգիռ կողմերին ներկայացնել մի շարք առաջարկություններ, որոնք տարածքային մշակութային համակարգային մոտեցմամբ գործողություններ են, որոնց արդյունքում Տարածքում հնարավոր կլինի ապահովել մշակութային համակարգի արժևորմամբ զարգացում:

Մեթոդաբանությունը

Ծրագրի շրանակում թվով երեք պաշտոնական աշխատանքային հանդիպումների ընթացքում, ինչպես նաև այլ ձևաչափերով քննարկումների արդյունքում տեղական նախաձեռնող խմբի անդամների հետ դուրս են բերվել և հստակ ձևակերպվել են գործողություններ, որոնք տեղ են գտել վերջնական գործողությունների ծրագրում: Առաջադրվել են նաև երեք փորձնական (պիլոտային) ծրագրեր, որոնք կարող են ունենալ անմիջական ազդեցություն տարածքային մշակութային համակարգի կայացման և տեսանելիության ապահովման գործում:

Կառուցվածքը

Նախնական փուլում ուսումնասիրվել են Տարածքում առկա համայնքների պատմական զարգացումն ու դրանցում առկա մշակութային ու բնական լանդշաֆտները:

¹ Առանձին ներկայացվեն են Տարածքում առկա հուշարձանները, ինչպես նաև բնական ռելիեֆագիտն/առողջարանային և հատուկ պահպանության ենթակա տարածքները:

Աշխատանքային հանդիպումների ընթացքում առաջադրված գործողությունների ձևակերպման ընթացքում ուսումնասիրվել են տարածքում առկա հայեցակարգերն ու հաստատված ծրագրերը, նախկինում մշակված ու հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերը:²


Գործողությունների ծրագրի շրջանակում մշակված գործողություններից յուրաքանչյուրի համար ներկայացված է համառոտ նկարագրության դրա խնդիրների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ: Դրանք խմբավորված են երեք խմբերում՝ հայեցակարգային խնդիրներ, կառավարմանն առընչվող խնդիրներ, ինչպես նաև ներկայացվել են այլ առաջնահերթություններ, որոնցում արտացոլվել են Տեղական նախաձեռնող խմբի անդամների կողմից առաջադրված կոնկրետ առաջարկություններ:

Եզրակացությունների տեսքով ներկայացվեն են թվով երեք փորձնական (պիլոտային) ծրագրերի մանրամասն տեխնիկական նկարագրություններ:

2. Տարածքի ընդհանուր նկարագրություն

Տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում: Մարզի միջապետական սահմանի երկարությունը մոտ 400 կմ է, որից 350 կմ-ը Ադրբեջանի Հանրապետության հետ, 50-ը՝ Վրաստանի, ընդհանուր տարածքը՝ 2'703 քկմ է, մարզկենտրոնն է Իջևան քաղաքը:

Նկար 1. Դիրքը հանրապետությունում



Մարզի բնակչությունը կազմում է 132,0 հազ.մարդ, որից 52,6 հազ. բնակվում են քաղաքներում, բնակչության խտությունը 1 ք/կմ-ի վրա կազմում է 50 մարդ: Մարզը ներառում է նախկին Դիլիջանի, Տավուշի, Իջևանի ու Նոյեմբերյանի վարչական շրջանների 62 համայնքներ, որոնցից 5-ը քաղաքային, 57-ը գյուղական: Մարզի ընդհանուր ապահովվածությունը ճանապարհային ցանցով բավարար է, մարզի տարածքով է անցնում Երևան-Սևան-Դիլիջան-Իջևան միջապետական ճանապարհը: Մարզի տարածքը կազմում է հանրապետության տարածքի 9.1 %-ը, սակայն հանրապետության անտառային


ֆոնդի գերակշռող 33.4 %-ը բաժին է ընկնում մարզին: Տարաբնակեցման համար անբարենպաստ գոտին զբաղեցնում է մարզի տարածքի 4.5 %-ը: Գոտու տարածքը հիմնականում օգտագործվում է որպես ամառային արոտներ:

12-րդ դարով թվագրվող պատմամշակութային համալիրների առկայությունը տարածքում թույլ է տալիս ենթադրել, որ դեռևս միջնադարում Տարածքը բնակեցված է եղել:

Տարածքի ռելիեֆային ռեսուրսները ներկայացված են անտառներով, կլիմայաբուժության, բալնոլոգիական բուժման համար պայմաններով, պատմամշակութային, հնագիտական հուշարձաններով: Ողջ մարզում կան 797 պահպանման միավոր հուշարձաններ և 1996 հուշարձան: Պատմամշակութային հուշարձանները տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (մթա 3-1 հազ. մինչև 15-17-րդ դար), ավելի բազմազան են 10-13-րդ դարի հուշարձանները (եկեղեցիներ, վանական համալիրներ, ամրոցներ): Տարբեր են նաև հուշարձանների պահպանվածության աստիճանները՝ սկսած ավերակներից մինչև լավ պահպանվածները և վերականգնվածները: Տարածքը չափազանց հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ վանքային համալիրներ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ, դամբարաններ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ: Հատկանշական են Գոշավանքի, Հաղարծնի կայլն: Տարածքում գյուղացիական տնտեսությունները զբաղվում են այգեգործությամբ, անասնաբուծությամբ, բուսաբուծությամբ, մեղվաբուծությամբ և կերարտադրությամբ:

Տարածքի մոտակա օդանավակայանը «Զվարթնոցն» է, որը գտնվում է ավելի քան 150 կմ հեռավորության վրա: Ավելի մոտ գտնվող թերևս, Ստեփանավանի օդանավակայանն է, որն այս օրերին չի շահագործվում:

Նկար 2. Համայնքների տեղաբաշխումը Դիլիջանի ազգային պարկում



2.1. Դիլիջան քաղաքային համայնք

Մակերես՝ 43 քկմ

Բնակչություն՝ 15'700 մարդ (2012թ. հունվարի 1-ի դրությամբ)

Քաղաքային բնակավայր է դարձել 1938 թ-ին: Քաղաքի անվան ծագումը ոմանք կապում են ադրբեջաներեն «դելի»՝ խենթ և «ջան»՝ հոգի, սիրտ բառերի հետ, իսկ ոմանք էլ կապում են ինչ որ Դիլիջան կոչվող իշխանի անվան հետ: Ըստ ժողովրդական ստուգաբանության «Դիլիջանը» նշանակում է «քաղցր լեզու»: Մեկ այլ տարբերակի համաձայն քաղաքի անվանումը կապում են Դիլի անունով մի մարդու հետ, որին գայլերը հոշոտել են անտառում և նրան որոնող հարազատները երկար ժամանակ ձայնարկել են «Դիլիջան»:

Դիլիջան քաղաքը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան մասում Աղստև գետի հովտի արևմտյան մասում, որտեղ Աղստևի է խառնվում Դիլիջան անունը կրող վտակը, ծովի մակերևույթից 1100-1510 մ բարձրության վրա:

Հարավից եզերված է Փամբակի լեռներով, հյուսիսից՝ Բազումի լեռներով, իսկ հյուսիս-արևելյան ուղղությամբ ձգվում է Մուրգուզի գանգվածը, որը ձևավորում է մի շարք լեռնաճյուղեր, որոնց մեջ գոյանում են խորը, նեղ կիրճեր գառիվեր լանջերով և՛ ժամանակավոր, և՛ մշտական հոսք ունեցող արագավազ գետակներով:

Ռելիեֆը բարդ է, Աղստև գետի ողողահունը և դարավանդները հարթ են, իսկ լանջերը թեք են, կտրված հեղեղատներով: Հանդիսանում է Տավուշի մարզի հարավային մուտքը՝ Երևանից մոտ 100 կմ հեռավորության վրա:

Դիլիջան համայնքի տարածքը գրեթե ամբողջությամբ շրջապատված է անտառով³: Անտառը գտնվում է 1'200-2'000 մ բարձրությունների սահմաններում: Անտառի վերին սահմանից սկսվում են լեռնային արոտավայրերը, որոնք ծածկված են լեռնա-մարգագետնային բուսականությամբ: Շրջակայքը աչքի է ընկնում բուսական և կենդանական մեծ բազմազանությամբ: Դիլիջանի կլիման չափավոր տաք և խոնավ է, բնութագրվում է արևոտ չափավոր ձմեռով և չափավոր տաք ամառով: Միջին ամսական ջերմաստիճանը հունվար ամսին կազմում է -2, հուլիսին՝ 18,2 աստիճան (ցելցիուս):

Մակերևութային ջրերը ներկայացված են Աղստև գետով, որի գլխավոր վտակներն են Բլրան, Գետիկ, Հաղարծին, Շտողանաջուր և Հովաջուր գետերը: Քաղաքի ջրային ցանցի խտության գործակիցը կազմում է 0,78 կմ/քկմ: Դիլիջանի գոգավորությունում տեղադրված են Պարզ և Գոշ փոքր լճերը: Տարածքը գրեթե ամբողջովին ծածկված է խիտ անտառներով:

Առաջին հիշատակումը Դիլիջան քաղաքի մասին հանդիպում է ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի 1670-ականներով թվագրվող ուղեգրություններում, այնուհետև պահպանվել են 1766 թ.-ից տեղեկություններ, իսկ 1805-1813թ.-ից Դիլիջանի, որպես բնակատեղիի մասին, ստացվել են արդեն պատմական հարուստ տեղեկություններ: Նախկինում մտել է Ցարական Ռուսաստանի Ելիզավետապոլի նահանգի Ղազախի գավառի մեջ և տարբեր ժամանակներում ունեցել է Դելիժան, Դելիջան, Դիլի, Դիլիջան Հին, Փոքր Տիլի, Տիլիճան անվանումները: 1825 թ.-ին Դիլիջանում բնակվում էր 60 ընտանիք, 1848-49թթ.-երին հիմնադրվում է Պապանինոն (նախկին Սլոբոդկա) և Գուլովինո գյուղերը՝ գաղթած մուլկանների¹ կողմից:

1913թ. Դիլիջանում բացվեց թոքային հիվանդների համար առողջարան, ավելի ուշ (1921 թ.-ին) հիմնվեց առաջին տուբերկուլոզային առողջարանը Հայաստանում: 1926 թ.-ին Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշմամբ, Դիլիջանը վերածվում է առողջարանային ավանի: 1926թ.-ին Դիլիջանը հայտարարվեց որպես քաղաք-առողջարան, որից հետո 1928թ.-ին նկարիչ Եսկովի կողմից կազմվեց առաջին գլխավոր հատակագիծը: Այն տարբեր ժամանակներում եղել է գյուղ, գյուղաքաղաք, ավան, որը բաժանված է եղել 2 թաղի՝ Հին թաղ, որը եղել է զուտ հայաբնակ, և Նոր թաղ, որն եղել է ռուսաբնակ: 1926-1976 թթ.-երի ընթացքում Դիլիջանի բնակչությունը աճել է մի քանի անգամ, 1976 թ.-ին կազմել է 24'056 մարդ:

¹ Ռուսական ոչ ուղղափառ էթնիկական խումբ, առաջացած 18-րդ դարում

1939թ.-ին ճարտարապետ Հ.Իսաբեկյանի կողմից մշակվեց նոր գլխավոր հատակագիծ, որտեղ քաղաքի հատակագծային սահմաններում ներառվեցին Շահումյան, Գոլովինո և Պապանինո բնակավայրերը: 1959թ. Դիլիջանը և վերոնշյալ բնակավայրերը պաշտոնապես միավորվեցին և հայտարարվեցին հանրապետական ենթակայության առողջարանային ուղղվածության միասնական քաղաք:

1961թ.-ին մշակվում է Դիլիջանի նոր գլխավոր հատակագիծը՝ մինչև 1980թ. հեռանկարով, որտեղ ավելի էին զարգացվում քաղաքի հանգստի և առողջարանային գործառույթները, սակայն առաջարկվում էր քաղաքի սահմաններից դուրս բերել թոքախտային հիվանդություններով տառապողների համար արողջարան ու հիվանդանոցը: 1971թ.-ի որոշմամբ Դիլիջանը հայտարարվեց հանրապետական նշանակության քաղաք-առողջարան: Խորհրդային տարիներին Դիլիջանը համամիութենական նշանակության առողջարարական և զբոսաշրջության քաղաք էր համարվում: Տարածքում կան երկու տասնյակ աղբյուրներ, որոնցից առավելապես հայտնի են «Դիլիջան» և «Ֆրոլովա բալկա» հանքային ջրերը:

Դիլիջանը հանդիսանում է առողջարանային քաղաք և ունի մի շարք առողջարան-հանգստավայրեր: Դրանցից ամենախոշորը «Լեռնային Հայաստան» առողջարանն է, որը կառուցվել է 1970-ական թվականներին ճարտարապետ Զ. Բախշինյանի նախագծով: Դիլիջանում էին գտնվում կոմպոզիտորների միության (պահպանվել է մինչ այժմ), կինեմատոգրաֆիստների ստեղծագործական տները (վերածվել է ֆինանսական ուսումնական կենտրոնի):

Խորհրդային շրջանի վերջին գլխավոր հատակագծի մշակումը 35'400 մարդ հաշվարկային բնակչությամբ Լ. Էյվազովայի ղեկավարությամբ սկսվել էր 1981թ. և ավարտվել 1985թ.:

1985 թ.-ին ՀԽՍՀ մինիստրների խորհրդի կողմից հաստատվել է «Դիլիջան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը» (հեղինակներ՝ Ավետիսյան, Թելումյան), որտեղ հեղինակների կողմից առաջարկվել էր.⁴

- Պատմամշակութային արգելավայր-թանգարան, որը ընդգրկում էր «Քյարամի քուչա» թաղամասը
- Հուշարձանների խմբային պահպանման գոտի
- Կառուցապատման կարգավորման գոտի
- Բնական լանդշաֆտի պահպանման գոտի
- Պոտենցիալ պեղման գոտի
- Քաղաքի զարգացման ուղիներ՝ Թաղթա և Շամախյան թաղամասերը:


Քաղաքի կառուցապատումը, հիմնականում, տարվել է պլանավորված՝ գործող գլխավոր հատակագծերի համաձայն:

Բազմահարկ բնակելի կառույցներ կան առանձին տարածքներում, մասնավորապես՝ Պապանինոյում, Շամախյանում և այլն, սակայն դրանց մի մասը այսօր վթարային վիճակում են և վերաբնակեցման կարիք ունեն, օրինակ՝ «Կաղնի խաչ» թաղամասը և այլն:

Մասամբ քաղաքի տարածքով է անցնում Հրազդան-Իջևան երկաթուղին, որը կառուցվեց անցյալ հարյուրամյակի 80-ական թվականներին: Երկաթուղու նպատակն էր Հայաստանը երկրորդ գծով կապել Խորհրդային Ադրբեջանի երկաթուղու հետ: Սակայն երկաթուղագծի

կառուցումից հետո պարզվեց, որ այն ունի տեխնիկական թերություններ և երկաթուղու շահագործումը խորհրդային տարիներին դադարեցվեց:

Նկար 3. Դիլիջան քաղաքային համայնքի պատմամշակութային հուշարձանները (2007թ.)



Դիլիջանը գծային քաղաքաշինական կառուցվածք ունեցող քաղաք է, տեղավորված գլխավորապես Աղստևի և Աղստևի վտակների երկարությամբ որին նպաստել են նաև միջպետական նշանակության Մ-4 և Մ-8 մայրուղիների առկայությունը:

Ներկայումս գործում են շուրջ երեք տասնյակ առողջարաններ և հանգստայն տներ, հինգ դպրոցներ, երեք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ և ԲՈՒՀ-երի 2 մասնաճյուղեր: Քաղաքն ունի թանգարաններ, գրադարանների համակարգ, գեղարվեստի և երաժշտական դպրոցներ, բժշկական կենտրոն, մշակույթի տուն, համայնքային կենտրոն, պատկերասրահ, սպորտդպրոց: Նախորդ դարի վերանորոգված քաղաքային գրադարանում բացվեց նաև Թումս ստեղծարար ուսումնական կենտրոնի Դիլիջանի մասնաճյուղը, ինչպես նաև Կենտրոնական բանկի ինտերակտիվ կենտրոնը:

Քաղաքի միջով անցնում են երեք միջանցիկ ճանապարհ՝ դեպի Երևան, Թբիլիսի և Վանաձոր, որոնք հատվելով քաղաքի կենտրոնում կազմում են բարդ հանգույց:

Քաղաքի տարածք կտրտվածության պատճառով քաղաքի փողոցներն ունեն երկայնական մեծ թեքություններ: Բացառություն է կազմում Դեբեդ գետի երկայնքով ընկած Կալինինի (Մ-8) և գետափնյա փողոցները, ինչպես նաև Թբիլիսյան խճուղին (Մ-4):

Եթե քաղաքի հին կառուցապատման թաղամասերի փողոցները (Մյասնիկյան, Շահումյան, Օրջոնիկիձե, Գայի) ունեն ոչ այնքան մեծ թեքություններ, ապա նոր կառուցապատման թաղամասերի փողոցները կտրուկ թեքություններ ունեն, ինչը շատ դժվարացնում է թե՛ դրանց շահագործումը, և թե՛ պահպանումը:

Համայնքի բնակչությունը համաձայն 2011թ.-ի տվյալների 18,0 հազ.մարդ է: Համեմատած 1989թ.-ի 30,7 հազ.մարդ բնակչությունը նվազել է: 2005 թվականին կազմել է 16,0 հազ.մարդ: Համաձայն ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի, գերադասելի առավելագույն բնակչությունը սահմանափակվում է 25,0 հազ.մարդով:

Համաձայն մշակված գլխավոր հատակագծի հեռանկարային բնակչության թիվը 2020թ.-ին ենթադրվում է կավելանա.

- բնակչության թիվը 25'000 մարդ
- հանգստացողների և սանատորիական բուժում ստացողների թիվը 4'500 մարդ:

Ներկայումս իրականացվում է քաղաքը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դարձնելու կառավարության ծրագիրը:

2.2. Գոշ գյուղական համայնք

Մակերես՝ 15.4 քկմ

Բնակչություն՝ 1'218 մարդ (2012թ. հունվարի 1-ի դրությամբ)

Գոշը հիմնվել է 1840-45թթ.-ին: Առաջին բնակիչներն եղել են նախկին Նոյեմբերյանի շրջանի Դոստլու և Կոթիգյուղերից վերաբնակեցվածները: Որպես հին բնակատեղի, հիշվում է դեռևս 10-11 դարերից:

1178թ. կառուցվել է Գոշավանքի վանական համալիրը: Այն կառուցվել է Մխիթար Գոշի կողմից՝ Իվանե Զաքարյան իշխանի աջակցությամբ: Գոշավանքը եղել է միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային խոշոր կենտրոններից մեկը, որտեղ ստեղծվել և պահպանվել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր: Այստեղ է ուսում առել և գործել Կիրակոս Գանձակեցին:

Համայնքի զբաղեցնում է 1479,56 հա տարածք, ապահովված է խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար, գազաֆիկացման աշխատանքները ընթացքի մեջ են: Բնակչության հիմնական զբաղմունքն է բուսաբուծությունն ու անասնապահությունը: Այժմ Գոշում գործում են միջնակարգ և 8-ամյա դպրոցները, բուժկետ և համայնքային կենտրոն:

2.3. Հաղարծին գյուղական համայնք


Մակերեսը՝ 36,7քկմ

Բնակչություն՝ 3'784 մարդ (2012թ. հունվարի 1-ի դրությամբ)⁵

Հաղարծին (հիմնադրման պահին Ջարխեջ կամ Ճարխաչ) գյուղը հիմնադրվել է Աղստևի հովտում 1815թ.-ին: 1940թ.-ին գյուղը վերանվանվել է Կույբիշև: Հիմնականում բնակեցվել են

Իջևան քաղաքի մոտ գտնվող Աչաջուր գյուղից տեղափոխված բնակիչների կողմից: Ինչպես հյուսիս-արևելյան մյուս բնակավայրերը, այնպես էլ նախկին Հաղարծինը, որն ուներ 35 ծուխ, 19-րդ դարի սկզբին մտել է ռուսական կայսրության կազմի մեջ: Խորհրդային տարիներին այն կոչվում էր Կոյբիշև, իսկ 1992թ.-ից կոչվում է Հաղարծին:

Նկար 4. Հաղարծին գյուղական համայնքի գլխավոր հատակագիծ (2005թ.)



Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն է: Գյուղն ունի 3 մասնաշենքերով միջնակարգ դպրոց, մանկապարտեզ: Մշակույթի տունը տիպային է՝ 400 տեղանոց: Նշված օբյեկտները վերանորոգման կարիք ունեն: Վերջին 5 տարիների ընթացքում համայնքում իրականացվել են մի շարք ծրագրեր: Համայնքի միջոցներով վերանորոգվել է գիշերային լուսավորության ցանցը, անց է կացվել 3 կմ

խմելու ջրագիծ, 4 կմ գյուղամիջյան ճանապարհ է խճապատվել, տեղադրվել է արբանյակային ալեհավաք, վերանորոգվել է գյուղապետարանի շենքը, հարթեցվել է 30 կմ հեռագնա սարամասիճանապարհը:

Համայնքը զբաղեցնում է 2'775,88 հա, որից՝ 1'055,29 հա արոտներ, 157,65 հա վարելահողեր, գյուղում կա 992 ընտանիք: Բնակչության հիմնական զբաղմունքը բուսաբուծությունն ու անասնապահությունն է: Ապահովվածությունը խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար, գազիֆիկացված է, ճանապարհների վիճակը գնահատվում է բավարար: Համայնքն ունի բուժկետ, մշակույթի տուն, համայնքային կենտրոն, մանկապարտեզ ու փոստի բաժանմունք:

Հաղարծինի գյուղական համայնքի տարածքն իրենից ներկայացնում է Աղստևի ձախ վտակ Հաղարծին գետի ձախափնյա ավազանի մի մասը: Բացարձակ բարձրությունները տատանվում են 960-ից մինչև 1'300 մ: Տարածքն իրենից ներկայացնում է գետի լայնացած ողողահունը, գետի դարավանդները, թեք, կտրտված լեռնալանջերը՝ հարավային, հարավարևելյան, հարավարևմտյան, հյուսիսային, հյուսիսարևելյան կողմնորոշումներով: Ողողահունը և ցածր դարավանդները (տերասաները), քիչ թեք լանջերը (մինչև 35%) կառուցապատված են, թեք լանջերն օգտագործվում են որպես արոտներ, Հաղարծին գյուղից հյուսիս գտնվող քիչ թեքություն ունեցող լանջերը ծածկված են արժեքավոր գյուղատնտեսական հողերով: Տարածքի հիմնական գետերն են՝ Աղստևը, և դրա ձախափնյա վտակները՝ Հաղարծինը և Սպիտակաջուրը: Աղստևը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջից: Գետի երկարությունը 133 կմ է, ջրհավաք ավազանը՝ 2'500 ք.կմ: Աղստև գետի ձախ ավիով անցնում էր երկաթգիծը՝ «Կույբիշև» կայարանով: Երկաթգծի օտարման գոտով անցկացվեց է Դիլիջան-Իջևան մայրուղին:

Հաղարծնի գյուղական համայնքի տարածքը գտնվում է «չափավոր» կլիմայական գոտում՝ տաք ամառով և չափավոր ցուրտ ձմեռով, ձյան կայուն և խորը շերտով:

Հաղարծին գյուղը և դրա շրջակայքը բնակեցված է եղել դեռևս բրոնզե դարում: 12-14րդ դարերում Աղստևի ամբողջ հովիտն, Արծրունիների և Ջաքարյանների իշխանության տակ բուռն զարգացում է ապրում: Այս ընթացքում են կառուցվում եկեղեցական համալիրներ, նոր բնակավայրեր, կամուրջներ ու քարավանսարաններ: Դրանց թվին են դասվում Հաղարծինի, Գոշավանքի, Մակարավանքի, Ջուխտակ, Առաքելոց, Կիրանցն և այլ վանքային համալիրները, որոնք հանդիսանում էին ժամանակի առաջատար կրթական և մշակութային օջախներ:

Հաղարծին գյուղական համայնքն ընդգրկված է «Դիլիջան» ազգային պարկի տնտեսական գոտում:

1985 թ. «Հայպետնախագիծ» ինստիտուտում մշակված «Դիլիջանի առողջարանային գոտու գլխավոր հատակագծում» հաշվի է առնված նաև Հաղարծին (Կույբիշև) գյուղը՝ որպես առողջարանային գոտու հեռանկարային զարգացման տարածք: Ըստ Դիլիջանի առողջարանային գոտու գլխավոր հատակագծի՝ Հաղարծին գյուղի հեռանկարային բնակչությունը 2010 թ. համար հաշվարկված էր 5'600 մարդ:

Հաղարծին գյուղը տեղակայված է Աղստև գետի հովտի ռելիեֆացիոն գոտում: Հաղարծինի գյուղական համայնքը գտնվում է Աղստև գետի միջին հոսանքի ռելիեֆացիոն գոտում, որը նախատեսված է «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթներով:

Ռելիեֆացիոն տեսանկյունից շատ մեծ է անտառների դերը, որոնք մեղմացնում են կլիմայական պայմանները՝ ստեղծելով բարենպաստ միկրոկլիմայական պայմաններ կլիմայաբուժության համար: Կլիմայաբուժության սեզոնը ձգվում է հուլիսից մինչև հոկտեմբեր, երբ կարելի է կազմակերպել օդաբուժություն և արևաբուժություն:

Հաղարծին համայնքի տարածքը միջին լեռնային կլիմայաբուժական առողջարանային վայր է: Կլիմայաբուժության կոմֆորտային պայմանները առավելագույնն են: Կլիմայաբուժության կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել քամու բացասական ազդեցությունը և մշակել միջոցառումներ քամու ազդեցությունը փոքրացնելու նպատակով (հատուկ ապակեպատ տաղավարների կառուցում):

Պատմամշակութային հուշարձաններն ընդգրկված են Աղստևի վերին հոսանքի ավազանի ռելիեֆացիոն ենթագոտում:

Հավելվածում բերված են մշակույթի ու պատմության հուշարձանների Կառավարության կողմից հաստատված ցուցակը Հաղարծին գյուղական համայնքի համար:

2007 թ.-ի դեկտեմբերի 27-ին թվականից ուժի մեջ մտավ N1589-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Տավուշի մարզի Հաղարծնի գյուղական համայնքի գլխավոր հատակագիծը:

2.4. Հովք գյուղական համայնք

Մակերես՝ 13,8 քկմ

Բնակչություն՝ 397 մարդ (2012թ. հունվարի 1-ի դրությամբ)

Հովք գյուղը մինչև հայ-ադրբեջանական հակամարտությունը բնակեցված է եղել ադրբեջանցիներով: 90-ական թվականներին այն բնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով: Նախկինում գյուղը կոչվել է Հախխիլու, Վուրդուն, իսկ այժմ ստացել է Հովք անունը: Գյուղը գտնվում է բարեխառն կլիմայական գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +19 է, ձմռանը՝ -2, բարձրությունը ծովի մակերևույթից 1'190մ: Համայնքի զբաղեցնում է 5'406,3 հա, որից՝ 403,3 հա արոտներ, 152,04 հա վարելահողեր: Բնակչությունը ներկայումս կազմում է 397 մարդ, 189 ընտանիք:

Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Ապահովված է բավարար խմելու և անբավարար քանակի ոռոգման ջրով: Գազիֆիկացված չէ: Գործում է միջնակարգ դպրոցը, համայնքում կա բուժկետ:

2.5. Թեղուտ գյուղական համայնք

Մակերեսը՝ 945 քկմ

Բնակչություն՝ 1'434 մարդ (2012թ. հունվարի 1-ի դրությամբ)

Գյուղը հիմնադրվել է 1925թ.-ին, այն սկզբում եղել է նախկին Ջարխես (այժմ Հաղարծին) գյուղի թաղամասերից մեկը, հետագայում որպես առանձին գյուղ անվանվել է Հաղարծին,

այնուհետև՝ Թեղուտ:

Գյուղը առանձին բնակավայրի կարգավիճակ է ստացել 1993թ.-ի Կառավարության որոշմամբ: Որպես Դիլիջանի քաղաքամերձ համայնք, գյուղի բնակիչների զգալի մասը ժամանակին աշխատում էր քաղաքի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում: Այժմ գյուղացիների հիմնական զբաղմունքն անասնապահությունն և հողագործությունն է: Թեղուտից մի քանի կիլոմետր հեռավորության վրա են գտնվում Հաղարծին և Ջուխտակ (Դիլիջանի վարչական տարածքում) վանքերը, որոնք հայկական ճարտարապետության լավագույն նմուշներից են: Համայնքը զբաղեցնում է 248, հա տարածք, ապահովված է ապահովված է խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար, գազիֆիկացված է, ճանապարհների վիճակը՝ բավարար: Համայնքն ունի՝ դպրոց, բուժկետ, մշակույթի տուն, համայնքային կենտրոն , մանկապարտեզ որը սակայն չի գործում:

2.6. Պատմամշակութային հուշարձաններ

Տարածքում առկա գոյություն ունեցող վանական համալիրներն են Հաղարծնի համալիրը (12-13 դդ.), Գոշավանքի համալիրը (1191 թ.), Ջուխտակ վանքը (1201թ.), Մաթոսավանքը (/1205թ.)⁶:

Հաղարծնի վանք

Հաղարծնի վանքը կազմավորվել է 11-13-րդ դարերի ընթացքում: Վանքի մասին տեղեկություններ է տալիս Կիրակոս Գանձակեցին: Որպես ուսումնագիտական կենտրոն, հիշատակվում է (Կոստանդին Դ, Ստեփանոս Օրբելյան) 13-րդ դարի առաջատար մշակութային կենտրոնների շարքում: Գտնվում է անտառապատ ձորի հյուսիսային լանջին, Դիլիջան քաղաքից 18 կմ, իսկ Հաղարծին գյուղից 8 կմ հեռավորության վրա: Բնական միջավայրի հետ ճարտարապետական ներդաշնակության հազվագյուտ օրինակ է:

Հաղարծնի համալիրի կազմում են երեք եկեղեցի, երկու գավիթ (մեկը՝ ավերված), սեղանատուն, աղոթարաններ, խաչքարեր: Վանքի տարածքում, հուշարձանների գլխավոր խմբից արևելք, ժայռալանջին աղոթարաններ են, գեղաքանդակ խաչքարեր: Հաղարծնում գտնված բրոնզաձույլ կաթսան (350 կգ, այժմ Հայաստանի պատմության պետական թանգարանում է) գեղարվեստական մետաղագործության բարձրարվեստ նմուշներից է, շուրթի պսակի փորագրությունը նշում է պատրաստման տարեթիվը՝ 1232:

Սուրբ Գրիգոր եկեղեցին վանքային համակառուցի վաղագույն հուշարձանն է: Վանքն իր ծաղկմանն է հասել 12-13-րդ դդ., հարստանալով եկեղեցական և քաղաքացիական նորանոր հուշարձաններով, կազմավորվելով, որպես ամբողջական համակառուց: Թեև պատմական ու վիմագրական վկայություններից զուրկ է, սակայն հետազոտողների կարծիքով թվագրվում է 10-11րդ դդ.: Հաղարծնի վանքը ավերվել է սելջուկների կողմից և նորոգվել 1184թվականին: Ներսի կրաշաղախով ծածկված պատերի վրա տեղ-տեղ պահպանվել են որմնանկարների հետքեր:

Բացի Սուրբ Գրիգոր եկեղեցուց, բաղկացած է Սուրբ Կաթողիկե, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Աստվածածին եկեղեցիներից, երկու ժամատներից, որոնցից Սուրբ Աստվածածինն ավերված է, սեղանատնից, նրան կից նորահայտ սյունազարդ շենքից, նույնպես ավերակ, տարաբնույթ տնտեսական շինություններից: Սուրբ Աստվածածին խաչազմբեթ եկեղեցի է, եկեղեցու երկու մուտքերն էլ ընդգծված են գեղեցիկ ջրամուտքերով, միմյանցից տարբեր լուծումներով, բոլոր ճակատները լուծված են հարուստ հարդարանքի միջոցներով: Արևելյան ճակատի վերնամասում, ավագ խորանի զույգ լուսամուտներից բարձր, կտիտորական բարձրաքանդակն է՝ կենտրոնում եկեղեցու մանրակերտը: Եկեղեցու արտաքին ճարտարապետության նկարագիրը լրացնում է որմնակամարներով հարդարված վերասլաց թմբուկը: Այն պսակող վեղարի հետ կատարում է տարածական գերիշխողի դեր վանքային համակառուցում:

Սեղանատունը զարգացած միջնադարի քաղաքացիական ու վանքային ճարտարապետության գլուխգործոցներից է: Տեղադրված է համակառուցի արևմտյան կողմում, հիմնական խմբից անջատ: Կառուցվել է 1248թ.ին: Սեղանատան ընդարձակ դահլիճը զույգ ցածր մույթերով բաժանված է քառակուսիների: Դրանցից յուրաքանչյուրը ծածկված է փոխադարձաբար հատվող զույգ կամարների կոնստրուկտիվ համակարգով: Բացի զույգ մույթերից կամարների համար հենարան են ծառայում յուրաքանչյուր քառակուսու պատերի զույգ որմնամույթերը: Հատումներով առաջացած ու բազմանիստ երդիկներով ավարտվող քառակուսիներից անցումը դեպի կենտրոնական մասի ծածկերը տարբեր է:

Վանքի տարածքում կան ավերակ այլ մատուռներ ու շենքեր, բազմաթիվ խաչքարեր: Կան մի շարք վկայություններ որ վանական համալիրի ճարտարապետը հանդիսացել է Մինաս ճարտարապետը:

2010-2012 թվականների ընթացքում տեղի են ունեցել վերականգնման և բարեկարգման աշխատանքներ: Մասնավորապես սալապատվել են նախկին թիթեղյա տանիքները, սալարկվել է ողջ տարածքը, իրականացվել են ստորգետյան ջրերի հեռացման համակարգի ներդրում, ինչպես նաև օդորակման արդի համակարգ:

Գոշավանք (ՆորԳետիկ)

Գտնվում է Դիլիջան քաղաքից 15 կմ դեպի արևելք հեռավորության վրա, Գոշ գյուղում: Հիմնադրվել է միջնադարի նշանավոր հայ հոգևոր գիտնական, առակագիր և իրավագետ Մխիթար Գոշի կողմից 1196 թ.-ի Գոշավանք (Նոր Գետիկ) Սուրբ Աստվածածին եկեղեցու օծման արարողությամբ: Իր հարդարանքով այս եկեղեցին միջնադարյան Հայաստանի դեկորատիվ արվեստի աչքի ընկնող կոթողներից է 12-13-րդ դդ. կրոնական, կրթական և մշակութային նշանավոր կենտրոններից մեկն է եղել:

Երկրաշարժից փլված Գետիկ վանքի փոխարեն 1188 թ.-ին իշխան Իվանե Զաքարյանի աջակցությամբ հիմնադրել է նշանավոր գիտնական, օրենսդիր, դավանաբան, մեկնիչ, առակագիր, մանկավարժ Մխիթար Գոշը (1120-1213)՝ անվանելով Նոր Գետիկ:

Այն գմբեթավոր դահլիճ տիպի կառույց է՝ արևելքից երկու կրկնահարկ խորաններով, արևմուտքից և հյուսիսից՝ մուտքերով: Արևելյան և հարավային պատերը մշակված են «հայկական

խորշերով» (եռանկյունաձև կտրվածքի), հաստաբուն թմբուկը երիզված է նախշազարդ գոտիով: Գավիթը (1197-1203 թթ.) չորս սյուներով կենտրոնակազմ գավիթների հիմնական տիպին է պատկանում: Արևելյան երկու անկյուններում ունի երկհարկանի խորաններ: Գոշավանքի գավիթը ձևով և կառուցվածքային տարրերով, Սանահինից հետո, նշանավորում է իր տիպի զարգացման հաջորդ քայլը՝ նախապատրաստելով Հաղարծնի և Կեչառիսի նույնատիպ կառույցները:

Սուրբ Աստվածածնից հարավ կանգնած է նույնատիպ, բայց ավելի փոքր չափերի Սուրբ Գրիգոր եկեղեցին (ավարտվել է 1231թ.-ին), որի գմբեթը չի պահպանվել: Գավթի հարավային պատին գրեթե կից է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ թաղածածկ դահլիճ-եկեղեցին (1237-1241թթ.), որը, չնայած փոքր չափերին, իր դեկորատիվ հարուստ հարդարանքով աչքի է ընկնում ընդհանուր առմամբ զուսպ մշակված համալիրի կառույցների շարքում: Այստեղ դեկորատիվ որմնասյունակամարաշարը, որ քողարկում է կառույցի պարզագույն ծավալը, ինքնանպատակ զարդապատում չէ, այլ կերպար և ճարտարապետական նոր բովանդակություն ստեղծող արտահայտչամիջոց:

Գավթից հյուսիս, նրան կամարակապ միջանցքով հաղորդակից է երկհարկանի գրատուն-զանգակատունը: Չտաշված մեծաչափ քարերով, փայտակերտ «վերնահարկերով» գրատունը և արևմուտքից նրա հետ ընդհանուր դռնով միջանցիկ ժամատունը, կառուցվել մինչև 1241թ.-ը: Հետագայում գրատան վրա կառուցվել է երկրորդ հարկը (1291 թ., ճարտարապետներ՝ Գրիգոր և Զաքիոս), որը խորանանման փոքր աղոթարաններով կառույց է: Մուտքը արևմուտքից է, ուր բարձրանում էին երկու կողմից՝ անկյուն կազմող բարձակային քարե աստիճաններով: Ժամատունը հավանականորեն եղել է նաև գրչության սրահ, որտեղ ձեռագրեր են ստեղծվել:

Համալիրի բաղկացուցիչ մասն են կազմում գերեզմաններն ու խաչքարերը, որոնց թվում Պողոս վարպետի երեք «ասեղնագործ» խաչքարերն են (Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատուռի արևմտյան ճակատի մոտ տեղադրված երկու խաչքարերից մեկը 1935թ.-ին տեղափոխվել է Հայաստանի պատմության պետական թանգարան): Ըստ արձանագրության՝ խաչքարերից մեկը (տեղում կանգնած) ստեղծվել է 1291 թ.-ին: Խորանի անկրկնելի վարագույրը պատրաստված է եղել այժի շատ փափուկ աղվամազից: Բարեպաշտ Արզուխաթունը ոչ միայն Նոր Գետիկի, այլև Հաղպատի, Մակարավանքի ու Դադիվանքի եկեղեցիների համար էլ է պատրաստել վարագույրներ ու ծածկոցներ, քանի որ ըստ Գանձակեցու՝ «չափազանց սիրում էր եկեղեցիները»:

Մխիթար Գոշի մահվանից հետո (1213թ.) վանքը նրա անվամբ կոչվել է Գոշավանք: Այն պատմական աղբյուրներում անվանվել է՝ վարժարան, վարժապետարան, համալսարան, ճեմարան: Ուսուցվել են հայոց և օտար լեզուներ (հունարեն, լատիներեն), քերականություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, երաժշտություն, գրչության արվեստ, նկարչություն: Այստեղ են կրթվել և գործել մշակույթի նշանավոր գործիչներ Վանական Վարդապետը և Կիրակոս Գանձակեցին, որոնք հետագայում իրենց հիմնած դպրոցներում շարունակել են Գոշավանքի ավանդները: Այստեղ պահվել և ստեղծվել են բազմաթիվ ձեռագրեր: Վանքն ունեցել է այգիներ, ջրաղացներ, գյուղեր, վարելահողեր, անտառներ, ամառանոցներ:

Վանքից ոչ հեռու՝ գյուղի հարավային մասում, կան կառույցներ՝ Սուրբ Գևորգ եռախորան գմբեթավոր փոքր եկեղեցին՝ կառուցված 1254-ին Խաչատուր վարդապետի և նրա եղբայր Բարսեղի կողմից, Մխիթար Գոշի բնակարանի մնացորդները, նրա դամբարանը:

1958-ին հայոց մեծագույն վարդապետներից մեկի՝ Մխիթար Գոշի դամբարանի մոտ հուշակոթող է կանգնեցվել, այնուհետև 1972-ին բացվել է Գոշի թանգարանը և բարեկարգվել վանքի տարածքը

Ջուխտակ վանք

Ջուխտակ վանք անվանումը ժողովրդական է: Ջուխտակն ունի երկու եկեղեցի (որից էլ ստացել է իր անունը՝ «Ջուխտ»՝ նշանակում է զույգ)՝ Սուրբ Աստվածածին եկեղեցի (1201 թ.) և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և շուրջը տարածված գերեզմանոց:

Ջուխտակ վանքը գտնվում է Դիլիջանից 3 կմ հյուսիս-արևմուտք, անտառաատ լանջին, երկու գետակների միջև ընկած՝ Լոռին Ղազախից բաժանող կաղնու և հաճարի անտառներով ծածկված Խալ-Խալլու լեռան հարավային փեշին: Վանքից ներքև, գետակներից մեկը թափվում է կարմրագույն գրանիտի մեծ սալի վրա: Հազարամյակների ընթացքում ջուրը այդ սալի մեջ փոս է առաջացրել: Ջուխտակ վանքը հիմնադրվել է 12-13 դարերում:

Բաղկացած է երկու առանձին եկեղեցիներից՝ Սուրբ Աստվածածին և Սուրբ Գրիգոր:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ գմբեթավոր եկեղեցին կառուցվել է 12 դ: Սուրբ Գրիգոր եկեղեցին կենտրոնազմբեթ, որմնամույթերի վրա հենվող 4 կամարով, սրբատաշ քարերով, միջին մեծության (9,7x7,5 մ) շինություն է: Գտնվում է Աստվածածին եկեղեցուց 20 մ արևելք: Նրա ավանդատները ձևավորված են նրբաքանդակ, բարձրաճաշակ զարդանախշերով: Վարպետորեն կերտված եկեղեցու արևմտյան մուտքի բարավորին փորագրված գրերից կարելի է ենթադրել, որ ս. Գրիգորը ավելի վաղ է կառուցվել քան Աստվածածինը:

1201 թ.-ին կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ վանքի առաջնորդ Հայրապետի նախաձեռնությամբ, ճարտարապետ Սարգսի մտահղացմամբ: Այն միանավ, թաղակապ, երկթեք տանիքով եկեղեցի է: Օգտագործված են դեղնավուն, բազմերանգ ֆելզիտի սրբատաշ քարեր: Եկեղեցիների ճակատներին պահպանվել են քանդակներ, վիմագրեր: Նշմարվում են օժանդակ շինությունների հետքեր: Համալիրի շուրջը կան գերեզմաններ: Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1201 թ., վանքի վանահայր Հայրապետի ջանքերով: Շարված է սրբատաշ դեղնավուն քարերով, քառանկյունի հատակագծով, միանավ բազիլիկի տիպի թաղակապ, երկթեք տանի-քով (8,6x6,4 մ) շինություն է:

Հուշարձանների պատերին փորագրված արձանագրություններում հիշատակվում են Պետրոսի վանք և Գիշերավանք անվանումները: Եկեղեցու պատերին կան նաև նվիրատվական մի քանի այլ արձանագրություններ:

1973-77 թ.-ին վանքական համալիրը վերականգնվել է, և բերվել նախկին տեսքին: 1975-1979 թթ.-ին Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության միջոցներով իրականացվել են հուշարձանախմբի վերանորոգման և շրջապատի բարեկարգման աշխատանքները:

Մաթոսավանքը

Այն գտնվում է Դիլիջան քաղաքից 4 կմ արևմուտք, Զուխտակ վանքի դիմացի լեռնալանջին, Շամախյան գյուղից ոչ հեռու:

Համալիրը բաղկացած է միմյանց կից փոքր եկեղեցիներից, գավթից և գրատնից: Հուշարձանախմբից հարավ-արևելք գտնվում է գերեզմանոցը: Եկեղեցին կառուցվել է 1205 թ, կիսամշակ խոշոր քարերով: Թաղակապ ծածկով, փոքր շինություն է, մուտքը արևմտյան կողմից, ճակատակալ քարին փորագրված է հիմնադրման արձանագրությունը: Մուտքի երկու կողմերին ագուցված են քանդակազարդ խաչքարեր: Գավիթը արևմուտքից կից է եկեղեցուն: Քառակուսի հատակագծով թաղածածկ, կիսամշակ քարերով, ներսից կրաշաղախով սվաղված շինություն է: Լուսավորվում է արևմտյան պատի լուսամուտից: Կան մի քանի տապանաքարեր: Գրատունը հյուսիսային կողմից հաղորդակից է գավթին: Նույնպես թաղակապ, 4X3,5 մ չափերի շինություն է: Մուտք ունի նաև արևելյան կողմից: Լուսամուտները բացվում են հարավային պատի մեջ: Ունի երկու տաճար և մեկ գավիթ: Վանքի համալիրի մեջ մտնում է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցել է Ավագ Զաքարյանը, Իվանե Զաքարյանի որդին, 1247 թ: Այժմ կիսավեր է: Պատերի վրա կան քանդակազարդ խաչքարեր և արձանագրություններ: Երբեմն նաև կոչվում է Պղնձահանք (Պղնձահանքի) Սուրբ Աստվածածին եկեղեցի:

2.7. Բնության պահպանության վիճակն ու հատուկ պահպանվող տարածքները

Կանաչ տարածքներ

20-րդ դարի 90-ական թվականներին էներգետիկ և տնտեսական ճգնաժամի տարիներին, ապօրինի հատումների հետևանքով Տարածքի անտառները զգալի կերպով վնասվեցին: Ներկայումս Դիլիջան համայնքի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 1'947,0 հա, այդ թվում ընդհանուր օգտագործման 13,1 հա, սահմանափակ օգտագործման՝ 132,5 հա, հատուկ նշանակության՝ 1'801,4 հա: Չնայած համայնքի կանաչապատվածության ընդհանուր բարձր աստիճանի, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներով (զբոսայգիներ, պուրակներ) բնակչության ապահովվածությունը ցածր է, այն կազմում է ընդամենը 3,9 քմ/մարդ: Համաձայն 1989 Քաղաքաշինական ՇՆուԿ-ի կուրորտային քաղաքներում այն պետք է կազմի առնվազն 12 քմ/մարդ: Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ներկայիս դեֆիցիտը կազմում է 3,7 հա (ներկայիս բնակչությունը 16 հազ. մարդ): Հաշվի առնելով բնակչության թվաքանակի նախատեսվող աճը (2020 թ.՝ 25 հազ. մարդ), ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների դեֆիցիտը կկազմի շուրջ 16,9 հա: Ներկայումս բարձր լեռնային Պարզ լիճը ճահճանում է և անհրաժեշտ է ձեռնարկել լճի և հարակից տարածքի պահպանության միջոցներ:

Դիլիջանի համայնքի տարածքում կա ոչ մեծ արհեստական դեկորատիվ լիճ, որը սնվում է Աղստև գետի հոսող ջրից, որը Աղստև գետի բարձր աղտոտվածության և հատակի անբավարար վիճակի պատճառով ներկայումս չի լցվում:

Հատուկ նշանակության կանաչ տարածքների (հատկապես անտառային հողերում) զգալի մակերեսներ գտնվում են անմխիթար վիճակում և կարիք ունեն մեծածավալ վերականգնողական միջոցառումների:

Նկար 5. Պարզ լիճ



Դիլիջան համայնքում աղմուկի հիմնական աղբյուրը ավտոմոբիլային տրանսպորտն է: Տրանսպորտային աղմուկի մակարդակը կախված է տրանսպորտային միջոցների կազմից, արագությունից և տեխնիկական վիճակից, երթևեկության ինտենսիվությունից, փողոցների երկայնակի թեքությունից և ծածկի վիճակից:

Ներկայումս Դիլիջանի քաղաքային համայնքի և շրջակա տարածքների մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրը գործող սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկություններն են, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերն և ավտոտրանսպորտի արտանետումները: Դիլիջանի վարչական սահմաններում ներառված բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասերին:

Համայնքի թափոնները պահեստավորվում են համայնքի վարչական սահմաններից երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվող 1 հա մակերես զբաղեցնող աղբանեցում: Աղբը

հիմնականում կենցաղային թափոններ են՝ տարեկան 5,4 հազ. խմ (2՝160 տ): Ներկայումս քիչ քանակությամբ արդյունաբերական թափոններ են առաջանում փայտամշակման արտադրամասում, որոնք լիովին ուտիլիզացվում են և օգտագործվում են որպես վառելանյութ: Կենցաղային թափոնները պահեստավորվում են առանց նախնական դասակարգման ու բաժանման և առանց շերտ առ շերտ գրունտային ծածկի:

Տարածքի հիմնական գետը Աղստևն է: Համայնքների սահմաններում ամբողջ երկայնությամբ Աղստև գետն աղտոտվում է արտադրական և կենցաղային հոսքաջրերով, որոնք հետ են թափվում առանց մաքրման կոյուղու ցանցով և անկազմակերպ ջրնետքերով: Աղստև գետի աղտոտման մակարդակի մասին տվյալները բացակայում են, քանի որ գետում ջրի վիճակի հսկողություն ներկայումս չի իրականացվում: Նախկինում կատարված չափումների և Հայաստանի գետերի աղտոտվածության գնահատման համաձայն Աղստև գետի աղտոտման մակարդակը Տարածքում գնահատվում է բարձր: Հաշվի առնելով 1991-2005 թթ. ընթացքում ջրօգտագործման կտրուկ կրճատումը և արտադրության անկումը և համապատասխանաբար կեղտաջրերի ծավալի կրճատումը, ներկայումս հնարավոր է գետի աղտոտման մակարդակի որոշ անկում:

Դիլիջանի քաղաքային համայնքի շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական ձեռնարկությունների, , բնակկոմունալ սեկտորի և ավտոտրանսպորտի արտանետումներով
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը
- անտառի անկայուն օգտագործում, որը համայնքի շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Ինժեներաերկրաբանական տեսակետից անբարենպաստ տարածքները (սահքերը, սահքավտանգ տեղամասերը, տեկտոնական ճեղքերը) կազմում են ընդհանուրի 65-75 %: Դիլիջանում ռեզերվային տարածքների խիստ դեֆիցիտ է՝ կապված խոշոր սահքերի, լանջերի թեքության, սահքավտանգավորության, բնապահպան անտառների, գյուղ հողերի, տեկտոնական ճեղքերի առկայության հետ:

«Դիլիջան» ազգային պարկ

Անտառային լանդշաֆտի, կենսաբազմազանության և գեղագիտական մեծ արժեք ներկայացնող բնաշխարհի պահպանության նպատակով 1958 թ.-ին ստեղծվեց Դիլիջանի արգելոցը, որի հենքի վրա 2002 թ.-ի փետրվարի 21-ի «Դիլիջան» ազգային պարկ կազմակերպելու մասին» N 165 որոշմամբ՝ Հայկական ՍՍԴ Մինիստրների սովետի 1958 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայկական ՍՍԴ բնության պահպանության մասին» օրենքի

կիրառման մասին» N 341 որոշմամբ կազմակերպված «Դիլիջան» պետական արգելոցի և դրան հարակից տարածքների սահմաններում:

«Դիլիջան» ազգային պարկի կազմակերպման հիմնական նպատակը Աղստև և Գետիկ գետերի ավազանների ջրային ու ցամաքային էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ու պատմամշակութային հուշարձանների պահպանության ապահովումն է:

Պահպանության օբյեկտներն են կովկասյան տիպի մեզոֆիլ անտառները, հաճարենու և կաղնու համակեցությունները, կենու եզակի պուրակը, անտառային հազվագյուտ ֆաունան և պատմաճարտարապետական ու բնության եզակի հուշարձանները: Ներկայումս պարկը զբաղեցնում է 28'002 հա տարածություն, այդ թվում՝ անտառածածկ 26'010 հա: Ազգային պարկի տարածքում կենու ամենախոշոր պուրակը Ախնաբատի կենու պուրակն է, որը գտնվում է Աղավնավանք գյուղի հարևանությամբ, 1958թ.-ին առանձնացվել է որպես արգելավայր: Այստեղ ծառերի միջին տարիքը տատանվում է 400-500 տարվա սահմաններում:

Պարկի անտառային հատվածում զգալի տարածք են զբաղեցնում վայրի պտղատուները: 123 տեսակ սննդային, մոտ 400 տեսակ կերային, մոտ 350 տեսակ մեղրատու, մոտ 120 տեսակ ներկատու բույսերը: Դեղաբույսերը պարկի ֆլորայում ունեն մեծ տեսակարար կշիռ՝ 20%:

«Դիլիջան» ազգային պարկը գտնվում է Իջևանի ֆլորիստիկ շրջանում: Ունի հարուստ ու բազմազան բուսաշխարհ և զբաղեցնելով Հայաստանի տարածքի 1% -ը ընդգրկում է Հայաստանի անոթավոր բույսերի ավելի քան 25% -ը (902 տեսակ):

Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից պարկի տարածքում աճում են բազում տեսակներ՝ զարմանազան երկնաճույնը (*Polemoniumcaeruleum*), ընկուզենի հունականը (*Juglans regia*), խոլորձ արականը (*Orchis mascula*), խոլորձ փայտոցիլավորը (*O. coriophora*), կակաչ արևելյանը (*Papaver orientale*), մրտավարդ կովկասյանը (*Rhododendron caucasicum*), կկվի արցունքները (*Coronaria flos-cuculi*) և այլն: Կոզո-Պոլյանսկուն, թխկի տրաուտվետտերին, պապլոր փայլունը համարվում են էնդեմ տեսակներ: Նրանց ընդհանուր քանակը 31 է:Ֆաունան համեմատաբար քիչ է ուսումնասիրված: Այստեղ հանդիպում են երկկենցաղների 4, սողունների 13, թռչունների 133 և կաթնասունների 43 տեսակ:

Ձկներից կարելի է նշել կարմրախայտը, քուռի բեղլուն (և այլն):

Կաթնասուններից այստեղ բնակվում ե կովկասյան գորշ արջը, ազնվացեղ եղջերուն, գայլը,լուսանը, աղվեսը, ջրասամույրը, գորշուկը, կզաքիսը, աքիսը, խայտաքիսը, անտառային կատուն,պարսկական սկյուռը, նապաստակը, քնամկները, սովորական անտառային մուկը, ջրառնետը, և այլն: Հաճախակի հանդիպում են վայրի խոզը և այծյամը , իսկ գետամերձ տարածքներում նաև Կարմիր գրքում գրանցված ջրասամույրը :

2007 թ.-ի N 204-Ն որոշմամբ հաստատվեց «Դիլիջան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանը (հողերի օգտագործման սխեման)՝ 14 քարտեզային հավելվածներով, որոնք ներառում են տարածքի ջրագրության, էնդեմիկ, ուտելի և դեղաբույսերի

բաշխվածությունը, տարածքի գործառնական գոտիների սխեման, բնական և մշակութային հուշարձանների բաշխվածությունը, տուրիստական հիմնական երթուղիների սխեման և այլն:

Արգելավայրեր

Ախնաբաթի արգելավայրը կազմավորվել է 1958 թ.-ին, 25 հա տարածության վրա: Արգելավայրը գտնվում է Միափորի լեռնաշղթայի Ծաղկոտ լեռնաբազուկի վրա, Փոլադ գետի ավազանում Աղավնավանք գյուղի մոտ, Ախնաբաթի եկեղեցու հարևանությամբ՝ 1'500 – 1'800 մ բարձրության վրա: Արգելավայրի պահպանության օբյեկտն է ռելիկտային կենու եզակի պուրակը: Արգելավայրի հիմնական ծառատեսակը սովորական կամ հատապտղային կենին է, որն աճում է լայնատերև (կաղնի, հաճարենի, թղկի և այլն) խառն անտառի խորքում:

Իջևանի արգելավայրը կազմավորվել է 1971 թ.-ին 7'800 հա տարածության վրա: Արգելավայրը գտնվում է Աղստև գետի ավազանում, Իջևանի լեռնաշղթայի լանջերին՝ 900 – 2'100 մ բարձրությունների վրա: Արգելավայրի պահպանության օբյեկտներն են՝ անտառային կենդանիները ու բույսերը:

Արջատխլենու արգելավայրը կազմավորվել է 1958 թ.-ին, 40 հա տարածության վրա: Արգելավայրը գտնվում է Գետահովիտ գյուղից մի քանի կիլոմետր վերև, Սառնաջուր գետի աջափնյակի զարիթափ լանջին, 1'400 – 1'600 մ բարձրության վրա: Արգելավայրի պահպանության օբյեկտն է արջատխլենին, որն իրենից ներկայացնում է բարձրահասակ, բրգաձև խիտ սաղարթով և մուգ մոխրագույն խորը ճաքճքված բնով սլացիկ ծառ:

Գանձաքարի արգելավայրը կազմավորվել է 1971 թ.-ին 6'800 հա տարածության վրա: Գտնվում է Պայտաջուր գետի ավազանում, որը հանդիսանում է Աղստև գետի աջափնյա վտակը: Արգելավայրի պահպանության օբյեկտներն են՝ անտառային կենդանիները և բույսերը:

Գետիկի արգելավայրը կազմավորվել է 1971 թ.-ին 6'000 հա տարածության վրա: Գտնվում է Գետիկ գետի ավազանում 1'500 - 2'700 մ բարձրությունների վրա: Արգելավայրի պահպանության օբյեկտներն են անտառային կենդանիները ու բույսերը:

2.8. Տարածքի առողջարանային ներուժը

Տարածքը միջին լեռնային անտառային գոտու տիպիկ կլիմայական առողջավայր է: Դիլիջան քաղաքի և շրջակայքի հիմնական բուժական գործոններն են՝ միջին և բարձր լեռնային կլիման, բարենպաստ թթվածնային ռեժիմը, անկրկնելի լանդշաֆտային առանձնահատկությունները, բուժական հանքային ջրերի առկայությունը: Տարվա տաք կեսին եղանակային պայմանները բարենպաստ են կլիմայաբուժություն կազմակերպելու համար:

Դիլիջանի ֆիզիկա-աշխարհագրական պայմանները միանգամայն բարենպաստ են Աղստև գետի աջափնյա և ձախափնյա լեռնալանջերը օգտագործելու ակտիվ հանգստի, իսկ բացատները՝ կլիմայաբուժություն կազմակերպելու համար: Այստեղ լանդշաֆտային պայմանները (20-250 թեքվածություն, առատ բուսածածկ, փոքրիկ հեղեղատներ) անփոխարինելի են բուժական ֆիզկուլտուրայի բոլոր մեթոդների, բուժական չափավոր քայլքի կիրառման համար:

Դիլիջանը և նրա հարակից շրջանները բնութագրվում են որպես կլիմայական կուրորտային գոտի բալնեոլոգիական պասիվ ուղղվածությամբ: Դիլիջան առողջարանում բուժման ցուցումները՝ շնչառական օրգանների տուբերկուլյոզ, արտաթոքային տուբերկուլյոզ, աղե-ստամոքսային տրակտի հիվանդություններ, լյարդի, լեղապարկի, լեղուղիների, ենթաստամոքսային գեղձի հիվանդություններ:

Ռեկրեացիոն ռեսուրսներից հատկապես կարևորվում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքը:

3. Նախագծի մշակման գործընթացը

Աշխատանքային հանդիպումներ Եվրոպական Միության Արևելյան գործընկերության մշակութային և բնական ժառանգության երկարաժամկետ կայուն արժևորման ծրագրի շրջանակում նախատեսված են ելել թվով երկու աշխատանքային հանդիպումներ ներկայացված գործողությունների ծրագրի իրականացման համար:

Առաջին աշխատանքային հանդիպման ընթացքում վեր հանվեցին և քննարկվեցին տարածքի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության խնդիրները: Տեղական ու միջազգային փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում առաջարկվեցին մասնակցային համալիր գործողություններ՝ ժառանգության պահպանման և արժևորման համար: Հանդիպումներին ներկա էին նաև տեղական ինքնակառավարման համակարգի ներկայացուցիչներ ու համայնքների ներկայացուցիչներ: Նրանց գիտելիքի ու փորձի ներդրումը առկա խնդիրների բացահայտման ու խնդիրների հստակ ձևակերպում գործում շատ հիմնարար դեր խաղաց ուսումնասիրությունների ընթացքի վրա:

Ծրագրի գործընկերն է Հայաստանում «Էկոտուրիզմի ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը: Ծրագրի մյուս մասնակիցներն են՝ ATU Քաղաքային վերափոխման ասոցիացիա, առաջատար գործընկեր (Ռումինիա), ACTI Տարածաշրջանային համագործակցության և եվրոպական ինտեգրման գործակալություն (Մոլդովա) գիտական մասով DICAR Բարի քաղաքի Համալսարան, Քաղաքաշինության և ճարտարապետության գերատեսչություն, գիտական գործընկեր (Իտալիա):

3.1. Խնդիրների բացահայտում

Եվրոպական Միության Արևելյան գործընկերության կողմից իրականացվող ծրագրի առաջին տեղական աշխատանքային երկօրյա հանդիպումը կայացավ 2012 թ.-ի նոյեմբերի 9-ին Դիլիջանում: Հայաստանում ծրագրի համակարգող Էկոտուրիզմի ասոցիացիայի նախագահ Ժաննա Գայանի հանդիպման նպատակների ներկայացումից հետո, միջազգային փորձագետ Սարիատ Պետրոսյանը ներկայացրեց Գոշ, Հաղարծին, Հովք ու Թեղուտ գյուղական ու Դիլիջան քաղաքին համայնքների քաղաքաշինական խնդիրների ամփոփ նկարագիրը: Ներկայացման հիման վրա ծավալված քննարկումները ձևավորված երկու աշխատանքային խմբերում, բացահայտեցին մի շարք խնդիրներ ու առաջարկեցին դրանց լուծմանը միտված քայլեր: Ստորև ներկայացված են խնդիրներն ու առաջարկները.⁷

- Քաղաքի գլխավոր հատակագծի թերությունները
- Զբոսաշրջային կառույցները գույքագրված չլինելը
- Դիլիջանի ճարտարապետությանը բնորոշ տների արտաքին պատշաճ ձևավորման, ներառյալ հին ավանդական ճարտարապետության կիրառմամբ շինությունների վերականգնման համար ուղղորդող մարմնի և ուղեցույցի բացակայությունը
- Գործողությունների ծրագիր ներդրումների համար նախանշված առաջնահերթությունների բացակայությունը
- Ֆինանսական ռեսուրսների ճիշտ տեղաբաշխման խնդիրը զբոսաշրջության ոլորտում

- Մասնագիտական, համակարգված մոտեցման բացակայությունը ֆինանսական ներդրումների ու եկամուտների անարդարացի բաշխումը
- Զբոսաշրջային զարգացման ու տեղեկատվական կենտրոնների բացակայությունը
- Պատմամշակութային արժեքների և դրանց գտնվելու վայրի մասին տեղեկատվություն պակասը
- Մշակութային հուշարձանների գույքագրության բացակայությունը և ստեղծել դրանց ռեգիստր
- Օրենդրական փոփոխությունների անհրաժեշտությունը քաղաքաշինության ոլորտում
- Ռեդկին Լազեր հնավայրի վերաբերյալ տեղում հուշարձանի կառուցման ու Թեղուտ գյուղի մշակույթի տան վերանորոգման անհրաժեշտությունը
- Հանրային տարածքների, հանգստայն գոտիների բարեկարգում, մանկական խաղահրապարակների հիմնում

3.2. Տարածական պլանավորման փաստաթղթերի վերլուծություն


Քանի որ Տարածքում առկա են միայն Դիլիջան քաղաքային և Հաղարծին գյուղական համայնքների համար մշակված գլխավոր հատակագծերը, այդ իսկ պատճառով վերլուծվել են միայն այդ երկու փաստաթղթերը:

Դիլիջան քաղաք

Քաղաքի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները.

- զարգացնել քաղաքի զբոսաշրջության զարգացման, մասնավորապես բուժական տուրիզմի ներուժը, ստեղծել կենսապահպանության համար հնարավորություններ
- խափանված մարզի բազմաթիվ ջրամբարները և հարյուրավոր կիլոմետրերի հասնող ոռոգման համակարգի ստեղծում՝ համապատասխան հողի ակտիվ շերտում խոնավության ապահովում ըստ կլիմայական պայմանների
- հեռանկարում բնական գազով ապահովվել բոլոր բնակելի, հասարակական, արտադրական նշանակություն ունեցող շենքերն տնտեսական ու տեխնոլոգիական կարիքների համար ջերմության պահանջարկը
- նախատեսվում է գործող աղբավայրի կոնսերվացում: Նախատեսվում է կենցաղային կոշտ թափոնների տեղափոխում աղբավերամշակման գործարան՝ 1հա տարածքի վրա, որը պետք է կառուցվի համայնքից 10-12 կմ հեռավորության վրա
- նախատեսվում է հեռանկարում քաղաքում միայն փոքր հզորությունների էկոլոգիապես մաքուր արտադրությունների տեղակայում՝ զգալի քանակության արդյունաբերական թափոններ չառաջանալու համար

Նկար 6. Դիլիջան քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծ (2007թ.)



- նախատեսվում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքը բաժանել երեք տարածքագործառնական գոտիների՝ արգելոցային, հանգստի (ռեկրեացիոն) և տնտեսական
- անհրաժեշտ է լողավազանների լայնածավալ նախագծում և կիրառում՝ օգտագործելով Աղստև գետի էկոլոգիապես մաքուր լեռնային ջրերը
- ազգային պարկում ամառվա ընթացքում կարելի է լայնորեն օգտագործել որոշակի անտառատեսակների (եղևնի, սոճի, կաղնի) առկայությունը մաքուր օդում կանխարգելիչ և վերականգնողական թերապիայի լայն կիրառման նպատակով, լեռնալանջերը կարելի է օգտագործել բուժական զբոսանք, սպորտային խաղերի կազմակերպման համար
- առաջարկվում է Դիլիջանի մերձակայքի արևելյան 2'000-2'500 մ բարձրության լեռնալանջերում դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից ձևավորվող ու մինչև ապրիլ (քամու միջոցով միջև անգամ հունիսի վերջը) պահպանվող կայուն ձյունաշերտը օգտագործել լեռնա-դահուկային սպորտի զարգացման համար

- Պարզ լճի և կից տարածքների սանիտարական մաքրում, ճահճացման կանխարգելում՝ հատուկ ծրագրի մշակման և իրականացման հիման վրա
- ձեռնակել միջոցառումներ տարածքը տարանցիկ ավտոտրանսպորտից բեռնաթափելու համար, ճանապարհային ցանցի բարելավման ու կանաչ պաշտպանիչ շերտով ապահովելու ողողությամբ
- աղմուկից պաշտպանվելու միջոցառումների իրականացումը
- ստեղծել 200 մ շառավղով սանիտարապաշտպանիչ գոտի հեռուստաաշտարակի էլեկտրամագնիսական ճառագայթման ազդեցության մեղմման համար (հաշվի առնելով նրա վերակառուցումը և հաղորդիչների հզորության հետագա մեծացումը)
- անհրաժեշտ է ապահովել հավաքված մակերևութային ջրերի տարեկան ելքի շուրջ 70%-ի մաքրում
- հեղեղային կոյուղու ցանցը պետք է ընդգրկի քաղաքի ամբողջ տարածքը
- ավելացնել կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը շուրջ 131 հա-ով, այդ թվում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը նախատեսվում է ավելացնել 40 հա-ով և բնակչության ապահովվածությունը հասցնել 21-24 քմ/մարդ, ինչը զգալի կերպով գերազանցում է 12 քմ/մարդ կուրորտային քաղաքների համար գոյություն ունեցող նորմատիվային ցուցանիշը:
- խախտված, դեգրադացված կանաչ տարածքներում է իրականացնել անհրաժեշտ մեծածավալ վերականգնողական միջոցառումներ:

«Հարավային Կովկասում մշակութային և բնական ժառանգության պահպանման և պատմական քաղաքների կառավարման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում 2004 թ. սեպտեմբերի 4-ին Երևանում Եվրոպայի խորհրդի Մշակույթի և մշակութային և բնական ժառանգության դիրեկտորատի (DGIV) մշակույթի և երիտասարդության հարցերով Հայաստանի բնապահպանության նախարարների կողմից ստորագրված «Ճարտարապետական և բնական ժառանգության ռեաբիլիտացիան քաղաքաշինության քաղաքականության մեջ գործողությունների ծրագրի իրականացման անհրաժեշտությունից ելնվով Տավուշի մարզում զբոսաշրջության և ժառանգության հարստացման ռազմավարությունները առավել զարգացնելու նպատակով, առաջարկվում է.

- կազմել և սահմանված կարգով հաստատել Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի հուշարձանների պահպանման գոտիների նախագծերը ու սահմանել դրանց պահպանության ռեժիմը, ստեղծել պատմամշակութային ու բնապահպանական արգելոցներ և հաստատել դրանց կանոնադրությունները ⁸
- գրանցել և վերահսկել հուշարձանի նկատմամբ սեփականության իրավունքի և օգտագործման ձևի փոփոխումները
- հուշարձանները հիմնականում պետք է օգտագործվեն գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ

- քաղաքի միասնական հատակագծային կառուցվածքում ներքին ռեզերվային տարածքների ընդգրկում, հին և նոր թաղամասերի օրգանական հատակագծային կապերի ստեղծում
- կառուցապատման խտությունների կանոնակարգում
- նոր անտառ-պուրակային ռեկրեացիոն գոտիների և էկոմիջանցքների ձևավորում
- սանիտարական գոտիների պահանջների պահպանում և կանաչ գոտիների ընդլայնում
- սեյսմիկ վտանգի և սողանքների պայմաններում քաղաքի կառուցվածքային հատակագծային տարրերի հուսալիության և կայունության ապահովում
- հյուսիս-արևմտյան մասում նախատեսվում է նոր թունելային անցում, որը թույլ կտա քաղաքի տարածքից դուրս հանել Վանաձոր-Իջևան տարանցիկ շարժումը
- ներքին փողոցային և հետիոտն շարժման ցանցի կատարելագործում, հարմարավետ կապերի ստեղծում նոր բնակելի թաղամասերի և այգեպուրակային և ռեկրեացիոն գոտիների միջև
- նախատեսվում է նոր բնակելի ֆոնդի տեղակայում է քաղաքի հյուսիս-արևմտյան և արևլյան մասերում՝ շուրջ 147 հա տարածք: Կարևորվում է նաև առանձին խախտված տարածքներում գոյություն ունեցող թաղամասերի վերակառուցման անհրաժեշտությունը
- առավելագույնս կանոնակարգել հասարակական սպասարկման օբյեկտների գոտիները և կանաչապատման համակարգը: Լրացնել նախադպրոցական հիմնարկների ցանցը
- առանձնացնել պատմական կառուցապատման և պատմական միջավայրի վերականգնման գոտիները
- պահպանելով բոլոր գոյություն ունեցող հանգստյան և առողջարանային գոտիներն ու հանգստի համար նախատեսված առանձին օբյեկտներն ու շինությունները՝ նախատեսել նաև տարածքներ հեռանկարում նոր հանգստավայրերի կազմակերպման համար: Այս տարածքները նախագծում տրվում են ռեզերվային գոտիների տեսքով, քանի որ դրանց պահանջարկի չափը առաջադրանքում հստակ ճշգրտված չէ
- զարգացումը հիմնականում հնարավոր է գոյություն ունեցող կառուցապատման խտացման (գետի հունում) կամ քաղաքում առկա գյուղատնտեսական տարածքների հաշվին
- Սահմանվել են մի շարք սահմանափակումներ պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի համար, մասնավորապես օգտագործվող շինանյութի, արտաքին ճակատների երեսապատման ու ձևավորման համար օգտագործվող միջոցների, նկուղային և կիսանկուղային հարկերի պատուհանագոգերի բարձրությունների, շքամուտքերի աստիճանների տեղադիրքի, լանջավոր տանիքների կիրառման դեպքում առավելագույն թեքությանների, գագաթի բարձրության, գովազդային վահանակների, ցուցանակների ու անվանատախտակների տեղադրման, փողոցային լուսավորության, տրանսպորտի միջոցների կանգառների, շենքերի միջև հեռավորության սահմանման, Գոտիավորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող շենքերի և կառույցների ընդարձակում չի թույլատրվում, մասնավորապես հետաքրքրական են Գոտիավորմանը չհամապատասխանող կառուցապատման կարգավորում դրույթները

- օգտագործել տարածքի ռեկրեացիոն ռեսուրսները էկոլոգիական զբոսաշրջություն կազմակերպելու համար, ինչպես նաև հանքային ջրերի փոքր պաշարները, անտառները, օդաբուժության պայմանները
- վերափոխել ճանապարհների, գերեզմանների, էներգետիկայի և այլ կոմունալ օբյեկտների այն պաշտպանիչ գոտիների տարածքները, որոնք այսօր արդեն զբաղված են բնակելի և հասարակական կառույցներով բուֆերային գոտիների, որտեղ մինչև հաշվարկային ժամկետի ավարտը, պետք է արգելվեն բոլոր նոր բնակելի և հասարակական կառուցապատման և վերանորոգման աշխատանքները
- առաջնահերթ համարել Դիլիջան և Իջևան քաղաքների շրջանցիկ ճանապարհների կառուցումը: Դիլիջանի պարագայում շրջանցիկ ճանապարհը կարելի է կառուցել երկաթուղուն զուգահեռ, մի քանի թունելներով և ուղեկամարդներով՝ չխաթարելու համար բնությունն ու չխանգարելու քաղաքային տրանսպորտի աշխատանքը: Առանց այդ կառուցվածքների շրջանցիկ ճանապարհի կառուցումը գործնականում անհնարին է, որովհետև տեղանքը խիստ կտրտված է:
- Դիլիջանի և նրա շրջակայքի շրջակա միջավայրի պահպանությանը կնպաստի միջազգային բնապահպանական երեք՝ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայով, Կենսաբազմազանության և Անապատացման դեմ պայքարի կոնվենցիաներով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը:

Հաղարծին համայնք

Հաղարծնի գյուղական համայնքի գլխավոր հատակագծի հիմնադրույթների իրականացման առաջնահերթ միջոցառումների շրջանակում նախատեսվում է զարգացնել տնտեսության զարգացման հեռանկարային հիմնական ուղղություններն են.

- արդյունաբերական համալիրը, պայմանավորված Հաղարծնի գյուղական համայնքի հարուստ հանքային դաշտերի տարածման շրջանում տեղադիրքով (ոսկի-պղնձահանքային, ոսկի-բազմամետաղային), կարող է տարածաշրջանային, միջմարզային ինտեգրման ճանապարհով ստեղծել տնտեսական կապեր՝ օգտագործելով հանքահումքային կենտրոնների վերջնական արտադրանքը արդյունաբերական ազատ հզորություններում: Հաշվի առնելով նաև «Դիլիջան» ազգային պարկի առկայության սահմանափակող գործոնը՝ պետք է կազմակերպել միայն հանքանյութի դուրս բերումը, իսկ մշակումը՝ պարկի սահմաններից դուրս:
- ագրոարդյունաբերական համալիրը, որը կզարգանա հիմնականում անասնապահական, պտղաբուծական ուղղությամբ: Այն կարող է սպասարկել նաև ռեկրեացիոն ճյուղը:
- ռեկրեացիոն ոլորտը, որի զարգացումը կուղեկցվի «Դիլիջան» ազգային պարկի սահմանափակող գործոնների հաշվառումով: Նախատեսում է Հաղարծնի ռեկրեացիոն ենթագոտու օգտագործման համար ռեկրեացիոն օբյեկտների շինարարություն, սպասարկման և մշակույթի օբյեկտների շինարարություն, ինժեներական, տրանսպորտային, տեխնիկական ենթակառուցվածքների զարգացում և

կատարելագործում, բնապահպանական միջոցառումների լայն համալիրի կիրառում՝ հաշվի առնելով «Դիվիզան» ազգային պարկի տարածքների օգտագործման ռեժիմները, ինժեներական նախապատրաստման, բարեկարգման աշխատանքների իրականացում, հակասողանքային, հակահեղեղային միջոցառումներ: Ռեկրեացիոն ենթագոտու կազմակերպումը կնպաստի նաև տեղական բնակչության ամենօրյա հանգստի կազմակերպմանը, նոր տիպի առողջարանների ստեղծմանը (կլիմայաբուժություն), նոր աշխատատեղերի ստեղծմանը, կրթական մակարդակի բարձրացմանը, բժշկական սպասարկման կատարելագործմանը, տեղեկատվության տարածման նոր ձևերի ներմուծմանն և տարածաշրջանի գյուղական բնակավայրերի խոշորացմանը: Նախատեսվում է ինչպես բնակչության առօրյան կազմակերպելու, այնպես էլ զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմաններ ապահովելու համար նախատեսել նաև ժամանցի ու զվարճանքի տարածքներ, որոնց համար պահուստային տարածք է առանձնացվել գետափնյա տարածքում՝ կիսաքանդ ֆերմաների հարակից հարթ տարածքներում (ներկայումս զբաղեցված արոտներով, որոնց օգտագործումն ըստ նշանակության աննպատակահարմար է, քանի որ վերջիններս աղտոտված են տարանցիկ մայրուղու երթևեկության արդյունքում արտանետված ծանր մետաղներով): Նախապես նախատեսվում է ավերի ամրացման, հենապատերի կառուցման աշխատանքներ: Ռեկրեացիոն ոլորտի զարգացումը նպատակահարմար է ռեկրեացիոն բոլոր ռեսուրսների ռացիոնալ, համատեղ օգտագործումով, էսթետիկական արժեքավոր միջավայրի ստեղծումով՝ փոխկապակցված գոյություն ունեցող տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական, սոցիալական ենթակառուցվածքների զարգացման և կատարելագործման հետ (Հաղարծինի համայնքի նախատեսվող ռեկրեացիոն ենթագոտին ընդգրկված է «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով» նախատեսված Աղստև գետի ավազանի ռեկրեացիոն գոտում):

- Հաղարծինի գյուղական համայնքում կարելի է զարգացնել նաև ձկնաբուծություն՝ օգտվելով Աղստև գետի հարուստ ռեսուրսներից

Այլ առաջնահերթ միջոցառումներ.

- գյուղական տարածքի գոտիավորման նախագծի հիմնադրույթների իրականացում
- նախատեսվում է կազմակերպել համայնքի համար անհրաժեշտ ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները նախկին «Իմպուլս» գործարանի հարակից տարածքում, հանրության համար նախատեսված զբոսայգի՝ մանկական խաղահրապարակներով, կարուսելով, սրճարաններով, ռեստորաններով, ճարտարապետական փոքր ձևերով, զրուցարաններով, խաղասրահներով
- վերակառուցել ջրամատակարարման ներքին բաշխիչ ցանցը համաձայն հիդրավլիկական հաշվարկների, կոյուղացնել բնակավայրը
- արդիականացնել և վերազինել էլեկտրական համակարգը համապատասխան ժամանակակից պահանջներին, 6.5 Մվա հզորությամբ «Հաղարծին» ենթակայանը

հզորացնել մինչև 10 Մվա, համապատասխանեցնել անվտանգության տեխնիկայի պահանջներին, փոխարինել փայտյա հենասյուները նորերով, անխափան էլեկտրաէներգիայի մատակարարման ապահովման համար անցում կատարել երկտրանսֆորմատային կայանների

- ապահովել բնական գազով բոլոր բնակելի և հասարակական նշանակության շենքերը (կրթական, առողջապահական, մշակութային, վարչական) ջեռուցման համար անհրաժեշտ կարիքների բավարարումը, ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ պահանջը, վերակառուցել գազափոխադրման համակարգը
- նախատեսել Հաղարծին գյուղական բնակավայրի համար է նոր թվային ավտոմատ ժամանակակից կայանի կառուցում, որի մաքսիմալ հզորությունը կարող է հասցվել մինչև 2000 համարի
- վերակառուցել ջրամատակարարման ցանցը, վերազինել՝ ջրամատակարարման գոտիների սահմանումով, պոմպակայանի կառուցումով
- նախատեսվում է մակերևութային և խորքային ջրերն աղտոտումից պաշտպանելու նպատակով համայնքի լրիվ կոյուղացում՝ միջազգային ստանդարտներին համապատասխանող տեխնոլոգիայով մաքրման կայանի կառուցումով, ջրամատակարարման ցանցի վերականգնում, վերազինում, ջրի որակի վերահսկման նպատակով բակտերիոլոգիական և քիմիական լաբորատորիաների, նոր տիպի քլորակայանների կառուցում
- նախատեսվում է աղբավայրի համապատասխանեցում սանիտարական պահպանման նորմերին (աղբավայրի ցանկապատում, աղբի ծածկում հողաշերտով, տոփանում)
- հակահեղեղային միջոցառումների իրականացում, այդ թվում և գետի հունի տեղափոխում
- հաշվի առնելով տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների տարածքային ընդհանրությունը և ինժեներական նախապատրաստման միջոցառումների իրականացման նպատակահարմարությունը, առաջարկվում է ստեղծել Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Խաչարձան, Աղավնաձոր համայնքների միջհամայնքային միավորում
- առաջարկվում է հեռանկարային հատակագծային կազմակերպման հիմքում գոյություն ունեցող փողոցային ցանցի արդիականացված և բարեկարգված տարբերակը՝ ներկայումս ձևավորված անկանոն՝ գլխավորապես փակուղային փողոցային ցանցի փոխարեն փողոցի որոշակի հատվածների լրացմամբ և գյուղական բնակավայրի գրեթե միջնամասով օղակաձև շրջանային փողոցի ձևավորմամբ: Առաջարկվում է իրականացնել նաև հեռանկարային կառուցապատում հյուսիսային հատվածներում հատկացված, սակայն դեռևս չկառուցապատված տնամերձ հողամասերում:⁹
- նախատեսվում է մթնոլորտային օդն աղտոտվածությունից պահպանելու նպատակով և մթնոլորտային օդի աղտոտվածության և աղմուկի դիսկոմֆորտի ազդեցության փոքրացման նպատակով արդյունաբերական օբյեկտների վերագործարկում և նորերի կառուցում միջազգային ստանդարտներին համապատասխանող, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող հասանելի տեխնոլոգիաներով և հասարակական կանաչ

զանգվածների մեծացում մինչև 6.7հա և համապատասխանեցում նորմատիվային չափանիշներին

- նախատեսվում է հողաբուսական ծածկույթն աղտոտումից և էրոզիայից պաշտպանելու համար անտառների, թփուտների և խոտածածկույթի վերականգնում, ինչպես նաև արհեստական դարավանդների հատվածներում հյուսված ցանկապատերի ստեղծում՝ հողաշերտի ամրացումով
- իրականացնել ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգով Հաղարծին գյուղական բնակավայրի քրթեջային, հասարակական, առողջապահական, մշակութային, վարչական շենքերի ջեռուցման կարիքների բավարարումը
- առաջարկվում է որպես առաջնահերթ միջոցառում գերեզմանոցները ցանկապատել և ցանկապատի երկարությամբ խիտ ծառապատել:

3.3. Գործողությունների ծրագրի դրույթների քննարկում

Հիմնվելով բացահայտված խնդիրների վրա ու պայմանականորեն դրանք բաժանելով երեք խմբերի, սույն թվականի ապրիլի 17-18 դրանք կրկին անգամ քննարկման հանվեցին Դիլիջանում անցկացված Եվրոպական Միության Արևելյան գործընկերության մշակութային և բնական ժառանգության երկարաժամկետ կայուն արժևորման ծրագրի շրջանակում կազմակերպված երկրորդ աշխատանքային հանդիպման ընթացքում:

Ստորև ներկայացած խմբավորված առաջարկները արդյունք են նախկին աշխատանքային քննարկման, ինչպես նաև առկա ծրագրային փաստաթղթերի վերլուծության: Դրանք հիմնականում բաժանված են երեք խմբերի.

1. Հայեցակարգային խնդիրներ (ծրագրային փաստաթղթեր)
2. Կառավարման խնդիրներ
3. Առաջնային ծրագրեր

Հայեցակարգային խնդիրներ

Տարածքային պլանավորման փաստաթղթեր

- Մշակել Դիլիջան քաղաքային և Հաղարծին գյուղական համայնքների նոր գլխավոր հատակագծեր և գոտիավորման նախագծեր կամ կատարել փոփոխություններ(ճշտումներ) գործող փաստաթղթերում
- Մշակել Գոշ, Թեղուտ ու Հովք գյուղական համայնքների համար տարածական պլանավորման փաստաթղթերի փաթեթ (գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագիծ)
- Մշակել լայն տարածքային ընդգրկմամբ (Դիլիջան քաղաքային, Գոշ, Թեղուտ, Հաղարծին և Հովք գյուղական համայնքները ներառող, այսուհետ՝ Տարածք) պատմամշակութային կամ դրան համարժեք նմանօրինակ պատմաճարտարապետական արժեքավոր միջավայրի պահպանության հիմնավորման նախագիծ

- Ապահովվել մշակված փաստաթղթերի հասանելիությունը հասարակության լայն շերտերի և մասնագիտական հանրույթի համար

Զարգացման հայեցակարգային ծրագրեր

- Մշակել Տարածքի ընդհանուր հեռանկարային զարգացման ուղղությունների հայեցակարգ(ռազմավարություն)
- Մշակել ընդհանուր Տարածքի համար ճարտարապետաշինարարական գործունեության համար անհրաժեշտ կանոնակարգ-ուղեցույց, հատկապես կարևորելով ժառանգության պահպանությանը միտված դրույթները
- Մշակել ընդհանուր Տարածք զբոսաշրջային գործունեության զարգացման հեռանկարային հայեցակարգ
- Ապահովվել մշակված փաստաթղթերի հասանելիությունը հասարակության և մասնագիտական հանրույթի համար

Կառավարման խնդիրներ

- Տարածքի զարգացման համակարգված կառավարում
- Տարածքում ներառված համայնքների կողմից նոր կառավարման միավորի ստեղծում (խորհուրդ, աշխատանքային խումբ, հանձնաժողով և այլն)
- Տարածքի ընդհանուր ներկայանանալի կերպարի բրենդավորման համար աշխատանքների իրականացում
- Զբոսաշրջային գործունեություն ծավալող ու սպասարկման ոլորտում ներգրավված կազմակերպությունների գույքագրում
- Զբոսաշրջության հետ կապված ծառայությունների տեղեկատվական բազայի ու միասնական ցանցի ստեղծում
- Զբոսաշրջային աջակցության (տեղեկատվական) կենտրոնի ստեղծում
- Զբոսաշրջության ոլորտում սպասարկման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում վերապատրաստելով մասնավոր ոլորտում գործող փոքր ու միջին սպասարկման ոլորտի ներկայացուցիչներին
- Զբոսաշրջության ոլորտում փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության խթանում, մասնավորապես ցածր տոկոսադրույքով վարկային միջոցների ապահովմամբ
- Տարածքում առկա պատմամշակութային հուշարձանների գույքագրում՝ օրենսդրությամբ նախատեսված բոլոր քայլերի իրականացմամբ (պահպանական, կառուցապատման կարգավորման և լանդշաֆտի պահպանության գոտիների ամրագրում)
- Դրա իրականացումը համակարգող մասնագիտական խորհրդատվական միավորի /հանձնաժողով, խորհուրդ/ ստեղծում
- Առկա պատմական արժեքավոր միջավայրերի ու դրանց հարող տարածների պահպանության իրավունքների ու լիազորությունների, մասնավոր, պետական ու եկեղեցապատկան տարածքների հստակեցում

Տարածքի որակական նոր չափանիշների սահմանում

- Կազմակերպել փողոցային լուսավորություն՝ էներգոխնայողական մոտեցումների կիրառմամբ
- Համայնքներից աղբի տեղահանման կանոնավոր կազմակերպում, աղբի տեսակավորման և վերամշակման համար միջոցառումների ձեռնարկում
- Տարածքի համար մշակել օրենսդրության շրջանակում պարտադիր, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվական վահանակների, ուղեցույցների տեղադրման ծրագիր
- Բարեկարգման աշխատանքներում խթանել միայն տեղական շինարարական նյութերի օգտագործումը
- Ապահովել հետիոտն, հեծանվային և այլ ոչ ավտոտրանսպորտային միջոցներով շարժման երթուղիներ թե՛ գործառնական նպատակներով, թե՛ մարզաառողջարանային զբոսաշրջության զարգացման նպատակով

Առաջնային ծրագրեր

- Պատմամշակութային հուշարձանների վերականգնում և հասանելիության ապահովում
- Ձեռնարկել Մաթոսավանք և Ջուղտակ վանական համալիրների վերակառուցման աշխատանքները, համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից՝ ներգրավելով մասնավոր սեկտորը
- Նպաստել հնավայրերի գործարկմանը և սահմանել համապատասխան վերահսկողություն
- Զբոսաշրջային կենտրոնի ստեղծում
- Զբոսաշրջային ոլորտին ուղղված նյութական միջոցների բաշխման ծրագիր, վարկերի տրամադրում ըստ առաջնայնությունների
- Զբոսաշրջային կրթական, տեղեկատվական ու կենտրոնի հիմնում
- Հանրային կանաչ տարածքների ու մշակութային հաստատությունների վերագործարկում
- Նպաստել Թեղուտ գյուղական համայնքում գոյություն ունեցող մշակույթի տան վերակենդանացմանը՝ դրանով նպաստելով ոչ նյութական մշակութային արժեքների պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը
- Մշակել գոյություն ունեցող հանրային կանաչ գոտիների բարեկարգման ու նոր տարածքների հիմնման ծրագիր
- Գիտակցության բարձրացմանն ուղղված միջոցառումներ
- Հանրության ներգրավվում զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացներին
- Կրթական ու մշակութային հաստատությունների միջոցով տեղական բնակչության գիտակցության բարձրացում
- Ներկաներից/մասնակիցներից ձևավորված Յիւնբերը կետ առ կետ վերլուծելով լրացրեցին ու մանրամասնեցին դրույթները:

4. Գործողությունների ծրագրի նկարագրություն

Գործողությունների ծրագիրը ներառում է միմյանց փոխլրացնող 30 գործողություններ, որոք խմբավորվեն երեք խմբերում հիմք ընդունելով բացահայտված խնդիրների տեսակները:

Ստորև ներկայացված են դրանք ամփոփ նկարագրությամբ, կիրառական տեղեկություններով, ինչպես նաև ակնկալվող արդյունքների վերաբերյալ կարճ տեղեկությամբ:

Հայեցակարգային խնդիրներ

Տարածքային պլանավորման փաստաթղթեր

1. Մշակել Դիլիջան քաղաքային և Հաղարծին գյուղական համայնքների նոր գլխավոր հատակագծեր և գոտիավորման նախագծեր կամ կատարել փոփոխություններ (ճշտումներ) գործող փաստաթղթերում

Նկարագրություն - Դիլիջան քաղաքի 2007թվականին հաստատված գլխավոր հատակագծում իբրև քաղաքի զարգացման հիմնական ուղղություն էր ընտրված զբոսաշրջությունը: Դրան հաջորդած ՀՀ կառավարության մի շարք որոշումներում, քաղաքը այժմ վերցրել է տարածաշրջանային ֆինանսական կենտրոն ձևափոխվելու ուղղությունը: Այն իր արտահայտությունն է գտել համայնքի զարգացման զարգացման ռազմավարություններում: : Սակայն ընդունված որոշմանը չեն հաջորդել համապատասխան փոփոխություններ նախապես հաստատված ծրագրային և տարածական փաստաթղթերում ու դրանից բխող փաստաթղթերի դրույթներում:

2007 թ.-ին մշակվել է նաև Հաղարծին գյուղական համայնքի գլխավոր հատակագիծը, իբրև բացառություն գյուղական բնակավայրերի համար: Թեև համայնքի կյանքում մինչև այսօր որևէ բեկումնային իրադարձություն չի գրանցվել, և տարածական պլանավորման փաստաթղթերը հաշվարկային 15-20տարվա համար էին մշակված, առաջարկվում է մշակել նոր կամ կատարել փոփոխություններ շրջանառության մեջ գտնվող փաստաթղթերում՝ դիտարկելով այն Տարածքի բաղկացուցիչ մաս:

Կիրառություն և տևողություն - Համապատասխան շտկումներից կամ նոր փաթեթը, բոլոր գործընթացային ընթացակարգերից հետո այն անմիջապես կդրվեն շրջանառության մեջ՝ համապատասխան հաշվարկային ժամկետով:

Ակնկալվող արդյունքներ - Ներկայացվող փաստաթուղթը հնարավորություն կտա ուղղորդել անվերահսկելի դարձած քաղաքաշինական գործընթացները տարածաշրջանի ու մասնավորապես Դիլիջան քաղաքային համայնքի համար և կնպաստի Տարածքի ներուժին համապատասխան արդյունքների ստացմանը: Ըստ բնույթի լինելով տարածական պլանավորման փաստաթուղթ, այն պետք է էականորեն տարբերվի նախկինում մշակված համանման փաստաթղթերից՝ ներառելով ռազմավարական փաստաթղթերին հատուկ դրույթներ, ինչպես նաև կարգավորման հստակ լծակներ ամբողջ Տարածքում կայուն զարգացն ապահովման համար:

Կարևորվում է նաև, մշակված փաստաթղթերի հասանալիությունը հասարակության լայն շերտերի համար. գործընթացները ավելի վերահսկելի ու թափանցիկ իրականացման համար: Դրանք թե նախագծային, թե կիրառման փուլերում, կլինեն հասանելի ու մատչելի, ցանկալի է

առցանց հասանելիություն: Այն մեծապես կնպաստի հասարակության շրջանում նման ծրագրերի վերաբերյալ վստահության ձևավորմանն ու տվյալ տարածքի բնակիչների պահանջների անմիջական արտացոլմանը վերջիններիս դրույթներում:

2. Մշակել Գոշ, Թեղուտ ու Հովք գյուղական համայնքների համար տարածական պլանավորման փաստաթղթերի փաթեթ (գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագիծ)

Նկարագրություն - Գոյություն ունեցող պլանավորման փաստաթղթերը նշված համայնքների համար մշակվել են միմյանցին առանձին և տարածքի ընդհանուր զարգացման հեռանկար ու միասնական նպատակներ որևէ կերպ ձևակերպված չեն: Տեղական կառավարման մարմինները դժվարանում են Տարածքի քաղաքաշինական զարգացումը կառավարելու ու ուղղորդելու, առաջնահերթությունների սահմանման ու ներդրումային ծրագրերի ղեկավարման գործում:

Կիրառություն և տևողություն -Առաջարկվում է տարածական պլանավորման միասնական փաթեթ մշակել նշված համայնքների համար՝ առաջադրելով ընդհանուր փոխկապակցված զարգացման հեռանկարներ: Մշակված փաստաթղթերը կփոխարինեն և կլրացնեն ներկայումս կիրառության մեջ գտնվող փաստաթղթերի փաթեթը և անմիջապես կդրվեն կիրառության մեջ տեղական ինքնակառավորման մարմինների կողմից:

Ակնկալվող արդյունքներ - Մշակված տարածական պլանավորման փաստաթղթերը հնարավորություն կտան, Դիլիջան քաղաքային և Հաղարծին գյուղական համայնքների հետ միասին, զարգացնել Տարածքը մեկ ընդհանրական ծրագրով, ինչը կապառվի ներուժի լիարժեք բացահայտմանն ու ակնկալվող արդյունքների ձեռք բերմանը:

Կարևորվում է նաև, մշակված փաստաթղթերի հասանալիությունը հասարակության լայն շերտերի համար. գործընթացները ավելի վերահսկելի ու թափանցիկ իրականացման համար: Դրանք թե նախագծային, թե կիրառման փուլերում, կլինեն հասանելի ու մատչելի, ցանկալի է առցանց հասանելիություն: Ակնկալվում է ավելի ժողովրդավար հասարակության ստեղծում, որի ցանկություններն ու ակնկալիքները կարտացոլվեն քաղաքաշինական զարգացման ծրագրերում:

3. Մշակել Տարածքի լայն ընդգրկմամբ պատմամշակութային կամ դրան համարժեք նմանօրինակ պատմաճարտարապետական արժեքավոր միջավայրի պահպանության հիմնավորման նախագիծ

Նկարագրություն - Տավուշի մարզը և Տարածքը առհասարակ, հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Հաշվի առնելով նաև այն փաստը, որ տարածաշրջանը ունի մեծ ներուժ զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման, ինչպես նաև զբոսաշրջությունը Ազգային մակարադակով, առաջարկվում է ընդունված հեռանկարային զարգացումների ծրագրերը արտացոլող վերանայված գլխավոր հատակագծից զատ, նույն փաթեթում կազմել նաև հուշարձանների պահպանման գոտիավորման նախագիծ: Այն կհանդիսանա հիմք, ավանդական ճարտարապետության պահպանված օրինակների վերականգնման ու վերակառուցման գործընթացները վերահսկելու համար, հատկապես

շեշտադրելով տարածաքային մշակութային առկա ներուժը դիտարկելով այն որպես մեկ ամբողջական համակարգ (սա պետքա նախաբանում օգտագործեմ նաև):

Կիրառություն և տևողություն - Հուշարձանների փաստացի քարտեզագրումից հետո, որի համար որպես հիմք կարող է ծառայել 1985թ.-ին ՀԽՍՀ մինիստրների խորհրդի կողմից հաստատված Դիլիջան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը (հեղինակներ Ավետիսյան, Թելումյան), առաջարկվում է մշակել դրանց պահպանության գոտիներ և հստակ ձևակերպել դրանցում կիրառվող սահմանափակումները՝ ներառելով Տարածքում գտնվող բոլոր արժեքավոր միջավայրերը:

Ակնկալվող արդյունքներ - Մշակված նախագիծը թույլ կտա վերահսկել ընթացող գործընթացները հուշարձանների պահպանության գործում, դրանց պահպանության և շահագործման հարցերը:

4. Տարածքում շարժման դյուրինացման ինտեգրված նախագծի մշակում

Նկարագրություն – Տարածքում առկա զբոսաշրջային և այլ պատճառներով հետաքրքրություն ներկայացնող կետերի միջև շարժման կազմակերպումը նպաստելու է դրանց հասանելիության, ինչպես նաև գրավչությանը: Այսօր տարածքում առկա են հիմանական ավտոմոբիլային շարժման համար նախատեսված ճանապարհներ: Վերջին մի քանի տարիներին զարգանում են նաև արշավային շարժման երթուղիները: Տարածքի ներուժի ամբողջական պատկերը հուշում է որ կարելի է զարգացնել անվավոր սարքերի, մասնավորապես հեծանիվի, շարժման, ինչպես նաև ձիերով շարժման երթուղային ցանցերը: Այն ոչ միայն կնպաստի բնապահպանական մի շարք խնդիրների լուծմանը, այլև կապահովի տարածքում զբոսաշրջային ժամանցի ու ենթակառուցվածքների զարգացմանը:

Կիրառություն և տևողություն - Նման նախագծի մշակումը ենթադրում է լուրջ ուսումնասիրական և քարտեզագրական աշխատանքներ: Դրա համար կպահանջվի շուրջ 1.5 տարի, սակայն զուտ նախագծի տեսակի վերաբերյալ ու դրա դրույթների ներկայացման համար հնարավոր է ակնկալել 4 ամիսների ընթացքում:

Ակնկալվող արդյունքներ – Նախագիծը կնպաստի առկա հետաքրքրության ներկայացնող կետերի քարտեզագրման և դրանց մատչելիության ապահովմանը: Այն կարող է ուղնեիշ լինել նոր քաղաքաշինական գործընթացների համար նոր որակական չափանիշների ապահովում

Ձարգացման հայեցակարգային ծրագրեր

5. Մշակել Տարածքի ընդհանուր հեռանկարային զարգացման ուղղությունների հայեցակարգ

Նկարագրություն – Հայեցակարգային խնդիրներից առաջնային կարևորության է համարվում, կազմել ըստ առաջնահերթությունների այդ թվում և ներդրումային ծրագրերի համար գործողությունների փաթեթ, հիմք ընդունելով քաղաքի գլխավոր հատակագծում տեղ գտած դրույթները կամ հանդիսանալ ուղենիշ նման ծրագրային փաստաթղթերի մշակման համար: Դրա ամենկարևոր հիմնադրույթը պետք է լինի Տարածքը որպես մեկ միասնական ամբողջություն՝

համակարգ ընկալելը: Այն հեռանկարային դժվար հասանելի խնդիրների համար տարվող աշխատանքներում պետք է ներառի տարբեր ընդգրկման մի շարք հայեցակետեր (կոնցեպցիաներ) որոնք չափելի լինեն տարբեր մակարդակներում:

Կիրառություն և տևողություն - Հստակ ձևավորված ու ըստ դասակարգված քաղաքաշինական խնդիրներն ու լուծման առաջարկները հնարավորություն կտան համակարգված մոտեցում ցուցաբերել տարածաշրջանի զարգացմանն ուղղված նյութական միջոցներին՝ կառավարել ֆինանսական ներդրումային հնարավորությունները ու եկամուտների արդարացի բախշում կատարել առաջնային լուծում պահանջող խնդիրների միջև: Այն կարող է ուղենիշ հանդիսանալ նաև մասնավոր և այլ հանրային միավորների համար՝ տարատեսակ ծրագրերի իրականացման գործում:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է հաջորդաբար փոխկապակցված քայլերի հերթականություն՝ կարճ ժամանակընթացքում անընդմեջ մշտադիտարկելով ու իրականացնելով “հարմարվողական” որոշումների վերանայման հիման վրա ղեկավարում:

6. Մշակել ընդհանուր Տարածքի ճարտարապետաշինարարական գործունեության համար անհրաժեշտ կանոնակարգ-ուղեցույց՝ հատկապես կարևորելով ժառանգության պահպանությանը միտված դրույթները

Նկարագրություն - Օտարերկրյա քաղաքաշինարար գործընկերներին անհանգստացրեց հսկայական տեղեկատվություն պարունակող տարածական պլանավորման փաստաթղթերի գրաֆիկական նյութերում տեքստային կարգավորումներ ու սահմանափակումներ պարունակող մասի բացակայությունը: Փորձագետներին մասնավորապես, անհանգստացնող է թվում առկա քաղաքային պատմականորեն ձևավորված միջավայրում անընդմեջ նոր կառույցների ավելացող անվերահսկելի գործընթացը, որոնք խեղաթյուրում են գոյություն ունեցող ամբողջական պատմականորեն ձևավորած կամ նույն տրամաբանությունը պարունակող միջավայրը: Ճարտարապետաշինարարական գործունեության համար անհրաժեշտ կանոնակարգ-ուղեցույցի մշակումը առաջին քայլը կարող է հանդիսանալ խնդրի լուծման համար:

Կիրառություն և տևողություն - Եվրոպական երկրներում ժամանակի ընթացքում իրեն միանշանակ արդարացրած փորձի տեղայնացումը թեև վերաբերվում ընդհանուր համակարգում փոփոխություններ կատարելուն, սակայն վերջին տարիներում Դիլիջանի մասնավոր օրինակի վրա այս բացթողումը առավել ակնառու է արտահայտված: Տեքստային հավելվածը կոչված է գրաֆիկական նյութերում երկակի վերլուծության/ ոչ միանշանակ վերծանության հնարավորություն տեղ թողնող դեպքերում հստակեցնել և լուծում տալ/ պարզաբանել բոլոր հնարավոր դեպքերը:

Ակնկալվող արդյունքներ - Վերոնշյալ միջոցառումների արդյունքում հնարավոր կլինի վերականգնել, որոշ տեղերում վերստեղծել գրեթե ամբողջությամբ կորցրած տեղական ճարտարապետական միջավայրերն ու գրագետ պահպանել ու շահագործել պահպանված դրվագները: Այն կարող է ուղենիշ հանդիսանալ տեղական մակարդակով ցանկացած թույլտվություն կամ ծրագրի իրականացման համար:

7. Մշակել ընդհանուր Տարածքի զբոսաշրջային գործունեության զարգացման հեռանկարային հայեցակարգ, կարևորելով մշակութային, ճանաչողական, բուժական, էկո և այլ այլընտրանքային զբոսաշրջության տեղական ներուժը

Նկարագրություն - Թեև քաղաքի զարգացման տեսլականը այժմ հանրապետության ֆինանսական կենտրոնն է, սակայն տարածքի ռեկրեացիոն ներուժը չթերագնահատելով, մի շարք քայլեր են մշակվել տարածաշրջանի զբոսաշրջային գրավչությունը բարձրացնելու համար: Դրան կնպաստի նաև վերը նշված հուշարձանների պահպանությանը միտված քայլերի ձեռնարկումը: Զբոսաշրջային գործունեության զարգացման ու կառավարման խնդիրները՝ ճանաչողական, մշակութային, էկոլոգիական, դիտարկվել են աշխատանքային հանդիպման ընթացքում, ինչպես տարածաշրջանային զարգացման հիմնական ուղղություն: Քննարկման ընթացքում, ևս մեկ անգամ շեշտվեց էկոզբոսաշրջության զարգացման կարևորությունը: Տարածքի հսկայական ներուժը, արտահայտված ժայրամագլցման, արդեն իսկ մշակված երթուղիներով քայլարշավների կազմակերպման, արտաճանապարհային մեքենաներով բնական խոչընդոտներով հարուստ Աղստևի կիրճով անցումներն ու Տավուշի անտառային ու ալպիական գոտիների առկայությունը համադրելով ճանաչողական զբոսաշրջության տարրերի հետ շատ գրավիչ են ինչպես տեղական այն պես էլ միջազգային զբոսաշրջության զարգացման համար: Տարածքի առանձնահատկություններից մեկն է տարբեր տեսակի զբոսաշրջության զարգացման առկա հնարավորությունները, որոնք փոխլրացնելով միմյանց կարող զարկ տալ ողջ զբոսաշրջային տնտեսական համակարգի կայացմանն ու զարգացմանը:

Կիրառություն և տևողություն - Ակնկալվում է առաջիկա տարիներին նպաստել հատկապես բազմապրոֆիտ տուրիզմի զարգացմանը, ուղղորդելով թե ներքին թե արտաքին տուրիզմի կարողությունները դեպի Տարածք: Այն շարունակական գործընթաց է և պետք է մշտադիտարկման արդյունքում անընդհատ վերանայման ու զարգացման ենթարկվի:

Ակնկալվող արդյունքներ - Սրա արդյունքում հնարավոր է ապահովել Հայաստան այցելած բոլոր զբոսաշրջիկների հոսքը դեպի Տարածք: Այն 2014 թվականին նախատեսվում է հասցնել մեկ միլիոնի: Հատկապես կարևոր է այնպիսի զբոսաշրջային ժամանացի կազմակերպումը, որը կստիպի զբոսաշրջիկին գիշերել Տարածքում:

8. Կարևորել տարածքի առողջարանային ներուժը և այն համարել բոլոր զարգացման ծրագրերի նախադրյալ

Նկարագրություն - Տավուշի մարզը ընդհանրապես և ընտրված Տարածքը մասնավորապես ռեկրեացիոն ռեսուրսներով՝ անտառներ, կլիմայաբուժության, բալնեոլոգիական բուժման համար զարգացման բոլոր անհրաժեշտ նախադրանքներով և տասնյակ տարիների պատմությամբ տարածք է: Ու թեև հանրապետության անտառային ֆոնդի 1/3 բաժինը իր մեջ ընգրկող տարածքը այժմ վերցրել է տարածաշրջանի ֆինանսական կենտրոնի դառնալու ուղին, սակայն առաջարկվում է մշակել բոլոր հեռանկարային զարգացման ծրագրերը հիմք ընդունելով այս դրույթը որպես ելակետ: Այն, ինչ որ տեղ, հակասության մեջ լինելով ֆինանսական կենտրոնի ընդունված ձևաչափերի հետ, մտածված ու զգուշավոր մոտեցման դեպքում հնարավոր է

համադրել: Համադրումն ինքնին մարտահրավեր է և պետք է տարվեն խորը և համապարփակ աշխատանքներ՝ դրա կայուն ու նպատակային իրականացման համար:

Կիրառություն և տևողություն - Տարածքում առողջարանային ենթակառուցվածքների զարգացման սկիզբը դրվել է դեռևս 20-րդ դարի սկզբին՝ Դիվիզան քաղաքում առաջին առողջարանի կառուցմամբ և այնուհետ անդադար զարգացվել է տարածքի ներուժը: Թեև Դիվիզան քաղաքը այժմ զարգանում է ինչպես տարածաշրջանի ֆինանսական կենտրոն, սակայն ամբողջ տարածքի առողջարանային և ընդհանրապես զբոսաշրջության ներուժի նոր արտահայտումների բացահայտումը և արդեն զարգացվածները ներառումը բոլոր ծրագրերում, իբրև անկյունաքարային, թույլ կտա լիարժեք օգտագործել Տարածքը: Կարևոր է նշել, որ հանրապետությունը նման ներուժ և ավանդույթներ ունեցող տարածքներով շատ հարուստ չէ, ինչ ևս մեկ առիթ ան... հնարավորությունները զարգացնելու:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է մի շարք այլ խթանիչ գործոնների հետ, Տարածքը զարգացնել իբրև զբոսաշրջային կենտրոն, ինչը մեծապես կնպաստել հանրապետության տնտեսական մակարդակի բարելավմանն ու տեղացիների կենսամակարդակի բարձրացմանն:

9. Բացահայտել տարածքում առկա արժեքավոր լանդշաֆտը, բնության, պատմության ու մշակույթի հուշարձաններն ու տեղանքին բնորոշ նյութական ու ոչ նյութական արժեքները

Նկարագրություն - Հիմնվելով միջազգային փորձի¹⁰ վրա առաջարկվեց առանձնացնել հատուկ ուշադրության ու պահպանման ենթակա տարածքները: Առանձնացված տարածքները՝ պատմական, քաղաքաշինական, բնապահպանական և այլ կարևորությունների, անհրաժեշտ կլինի գերծ պահել ցանկացած տեսակի փոփոխություններից: Դրանց շրջանակում պետք է իրականացվեն գիտական, հետախուզական աշխատանքներ գիտական ու հանրամատչելի հրատարակությունների պատրաստման համար: Անհարաժեշտ է նաև դրանք արտացոլել տարբեր տարածական պլանավորման փաստաթղթերում որպես հատուկ ուշադրության արժանի:

Կիրառություն և տևողություն - Նշված տարածքների բացահայտումն ու քարտեզագրումը, թույլ կտա պահպանել դեռևս գոյություն ունեցող բնության ու քաղաքային լանդշաֆտները, առանձին հուշարձանները իրենց շրջակա միջավայրերով, ոչ նյութական մշակույթի դրսևորումները հավաքագրել իբրև ազգային ֆոլկլոր:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է արժեքավոր միջավայրերի ու հուշարձանների պահպանություն, վերակառուցում ու շահագործում, պահպանված ավանդույթների վերածնունդ և արդյունքում նյութական նոր արժեքների ստեղծում:

10. Ապահովել հասարակության լայն շերտերի և մասնագիտական հանրույթի մասնակցությունը փաստաթղթերի մշակման գործընթացում, ինչպես նաև դրանք դարձնել հասանելի իրականացման ընթացքում

Նկարագրություն - Հայեցակարգային խնդիրներում կարևորվեց տեղական համայնքի մասնակցությունը որոշումների կայացման, մասնավորապես տարածքի հեռանկարային

զարգացման ուղղությունների ընտրության գործում: Հանդիպման մասնակից Դիլիջան քաղաքի գլխավոր ճարտարապետը, ներկայացնեց տիրող իրավիճակը. տուրիստական ու առողջարանային զարգացման ուղղություն վերցրած տարածքի գործառնական նշանակության կտրուկ փոփոխությունը բացարձակ չի համաձայնեցվել, նույնիսկ խորհրդատվության մակարդակի վրա, տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Կիրառություն և տևողություն - Փաստաթղթերի մշակման փուլում, ինչպես նաև դրանց իրականացման ընթացքում շարունակաբար հանրային լսումների կազմակերպումն և գործընթացների մշտադիտարկման անցկացումը ու արձագանքների քննարկումը, կապահովենսպասվող արդյունքները կամ նոր մարտահրավերները անպատասխան չթողնելու համար

Անկալվող արդյունքներ - Անկալվում է ավելի ժողովրդավար մոտեցում, ինչը կբարձրացնի արդյունավետությունը իրականացվելիք գործողությունների և կբարձրացնի նմանատիպ ծրագրերի նկատմամբ բնակչության վստահությունը ու տեղացիների նկատառումների անմիջական արտացոլումը դրանց մշակման ընթացքում:

Կառավարմանն առնչվող խնդիրներ

Տարածքի զարգացման համակարգված կառավարում

11. Տարածքում ներառված համայնքների կողմից ստեղծել նոր կառավարման միավոր՝ համակարգելու համար համատեղ տարվող աշխատանքները (խորհուրդ, աշխատանքային խումբ, հանձնաժողով, համայնքների միություն և այլն)

Նկարագրություն - Տարածքում ներառված համայնքների կողմից նոր կառավարման միավորի ու դրան կից մասնագիտական համակարգող խորհրդատվական միավորի ստեղծումը հնարավորություն կտա միասնական հայեցակարգային մոտեցում ցուցաբերել ամբողջ Տարածքին:

Ընդհանուր տարածքի կառավարումը ավելի համակարգված դարձնելու նպատակով իբրև է տարբերակ առաջարկվում նոր կառավարման միավորի (խորհուրդ, հանձնաժողով, համայնքների միություն) ստեղծումը: Քանի որ այսօր արդեն Հայաստանի Հանրապետությունում առկա է համայնքների միության վերաբերյալ (պետքա ավելացնել մի քանի անուններ) փորձ, ապա հնարավոր է նաև կիրառել այդ փորձը այս դեպքում: Այն նպատակ պետք է դնի որոշակի խնդիրների այն է տարածքայի մշակութային համակարգի կայացման, զարգացման և համակարգման շուրջ համագործակցություն:

Կիրառություն և տևողություն - Միասնական կառավարումը հնարավորություն կտա տարածքի համար ընդհանուր խնդիրների բացահայտմանը և փոխլրացմամբ դրանց միասնական լուծումների կայացմանն և իրականացմանն ուղված քայլերի մշակման

Անկալվող արդյունքներ - Արդյունքում, Տարածքը կզարգանա փոխկապակցված և համաձայնեցված, ընդհանրական մոտեցմամբ, ինչ կնպաստի առաջնայնությունների ճիշտ սահմանմանը, մարդկային և ֆինանսական միջոցների ռացիոնալ բաշխմանը:

12. Ֆիզիկական և առցանց (վիրտուալ) ճանաչելիության միջոցով Տարածքի ներկայացում¹¹

Նկարագրություն - Արտաքին գրավչության բարձրացման համար, առաջարկվում է Տարածքի ընդհանուր բրենդավորման մշակում՝ ավելի ներկայանանալի, մեկ ընդհանրական, փոխկապակցված գոտու տպավորություն ստեղծելու համար ու բացահայտելու տարածքի ընդհանուր գրավչության նախադրյալները՝ հնարավորինս դրանք օգտագործելու և պահպանելու համար: Այն պետք է ներառի նախևառաջ Տարածքի ճիշտ և հակիրճ անվան որոշում, որը պետք է ներառի նաև կարգախոս:

Կիրառություն և տևողություն - Ստացված արդյունքները կծառայեն Տարածքի ընդհանուր գրավչության բարձրացման համար, ավելի ճանաչելի կդարձնեն Տարածքը թե տեղական, թե միջազգային զբոսաշրջության համար:

Ակնկալվող արդյունքներ - Արդյունքում ստեղծված գրաֆիկական մշակումը պետք է ներառի արդի պահանջներին բավարարող գրաֆիկական նյութերում դրա կիրառության ձևերի վերաբերյալ ուղեցուց (բրենդ բուք): Դրանում հատկապես պետք է արտացոլեն համացանցում և տպագրական նյութերի կիրառության ձևերն ու ուղղությունները: Անհրաժեշտ է մշակել նաև Տարածքի համար համընդհանուր գրաֆիկական ներկայացուցչական արտահայտություն՝ տարբերանշանի (լոգոյի) տեսքով: Այն պետք է կիրառվի բոլոր տպագրական ու նման խթանիչ մարկետինգային ու տեղեկատվական նյութերում: Պետք է մշակվեն Տարածքի և դրա բաղկացուցիչ առանձին դրվագների (մասնավորապես Դիլիջան քաղաքի) համար քարտեզներ (նաև ինտերակտիվ), տեղեկատվական թռուցիկների և այլ քարոզչական նյութեր:

13. Մշակել և տեղադրել Տարածքի վերաբերյալ տեղեկատվական ու խթանման առցանց կայք

Նկարագրություն - Տարածքի ընդհանուր բրենդավորման և զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների մասին լիարժեք տեղեկատվություն հավաքագրելուց հետո, ամբողջ նյութը կտեղադրվի ինտերնետային կայքում՝ ապահովելով դրա շարունակական թարմացումն ու մատչելիությունը օգտատերերի համար:

Կիրառություն և տևողություն - Կայքը նախատեսված կլինի հիմնականում զբոսաշրջիկների, ինչպես նաև շրջակայքի բնակիչների համար: Այն կխթանի ինչպես տեղական, այնպես էլ միջազգային զբոսաշրջությունը:

Ակնկալվող արդյունքներ - Կայքը հնարավորություն կտա կողմնորոշվել ծառայությունների շուկայում, կբարձրացնի Տարածքի ճանաչելիությունը, կբացահայտվեն և ի ցույց կդրվեն Տարածքի գրավչության հիմնական աղբյուրները:

14. Գույքագրել զբոսաշրջային գործունեություն ծավալող ու սպասարկման ոլորտում ներգրավված կազմակերպությունները

Նկարագրություն - Ոլորտում գործող կազմակերպությունների գույքագրումը, նպատակ չհետապնդելով ծանրաբեռնել դեռևս ոտքի չկանգնած ոլորտը ու հարկային

պատասխանատվության ենթարկել, հնարավորություն կընձեռի պետության կողմից ոլորտի զարգամանն ուղղված ֆինանսական ռեսուրսների ու վարկերի ճիշտ բաշխմանն ու դրա վերահսկելի ու կառավարելի դարձնելուն ու միասնական տեղեկատվական բազա ստեղծելու ու համաձայն վերջիններիս տեղաբաշխման, ձևավորելու սպասարկման ոլորտի զբոսաշրջային կենտրոն, զարգացնելու ենթակառուցվածները, կանխարգելու համար չհիմնավորված գնային աճը:

Կիրառություն և տևողություն - Գույքագրման համար գործընթացների ձևակերպումից հետո, երեք ամիսների ընթացում հնարավոր կլինի հավաքագրել ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը: Նույնիսկ չամփոփված տվյալները, կարող են ծառայել վիճակագրության համար՝ ընթացիկ մարտահրավերներին պատասխանելու, դրանք ճիշտ վեկտորով ուղղելու ու միջոցները կառավարելու համար:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է ստեղծել զբոսաշրջային գործունեություն ծավալող կազմակերպությունների գրացուցակ (կատալոգ), որը ոչ միայն կծառայի զբոսաշրջիկներին ծառայություններից օգտվելու գործում, այլ նաև վիճակագրական տվյալների հիման վրա հետագա զարգացման ծրագրեր մշակելու համար:

15. Հիմնել զբոսաշրջության հետ կապված ծառայությունների տեղեկատվական բազա ու միասնական ցանց

Նկարագրություն - Տարածքում առկա զբոսաշրջային ներուժի բացահայտման ու համակարգման համար պետք է նախևառաջ հավաքագրել այդ տեղեկությունները: Կարևոր է նաև դրանք փոխկապակցել միմյանց, որից հետո այն տալու իր թե կարճաժամկետ, թե երկարաժամկետ արդյունքները: Դրանք տալու է համատեղ ծրագրեր իրականացնելու լավ հնարավորություն, ինչպես նաև առցանց ծառայությունների ամրագրման (մասնավորապես հյուրանոցների և հյուրատների դեպքում) հնարավորություն:

Կիրառություն և տևողություն - Այն կարելի է իրականացնել շատ կարճ ժամկետում թողնելով դրա զարգացման և կիրառության հետ կապված խնդիրները ապագային: Կարևոր է նաև այն շահագործող կազմակերպության ճիշտ ընտրության և թափանցիկ կառավարման հետ կապված խելամիտ որոշման ընդունումը:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է ստեղծել զբոսաշրջային գործունեություն ծավալող կազմակերպությունների գրացուցակ (կատալոգ), որը ոչ միայն կծառայի զբոսաշրջիկներին ծառայություններից օգտվելու գործում, այլ նաև վիճակագրական տվյալների հիման վրա հետագա զարգացման ծրագրեր մշակելու համար:

16. Ստեղծել զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն Դիլիջան քաղաքում

Նկարագրություն - Տարածքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և դասակարգման աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտ է տեղում ստեղծել տեղեկատվության հասանելիության համար հնարավորություն: Տարածքում, որպես ենթակառուցվածներով:

Կիրառություն և տևողություն - Նախորդ կետերի իրականացումը, բավական տեղեկատվություն կհավաքագրի կենտրոնի ստեղծման համար: Այն կծառայի զբոսաշրջության ոլորտում հիմք կստեղծի տեղեկատվական ինֆորմացիայի

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է, զբոսաշրջիկների համար տեղեկատվական կենտրոնի ստեղծում՝ տարածքում հեշտությամբ կողմնորոշելու համար:

17. Իրականացնել միջոցառումներ զբոսաշրջության ոլորտում սպասարկման որակի բարձրացմանն ուղղված, վերապատրաստելով նաև մասնավոր ոլորտում գործող փոքր ու միջին սպասարկման ոլորտի ներկայացուցիչներին

Նկարագրություն - Զբոսաշրջային գործունեություն ծավալող անհատների ու կազմակերպությունների համար հատուկ դասընթացների կազմակերպումը ու փորձի փոխանակման կազմակերպումը տեղական, թեև ոչ մեծ փորձ ունեցող սակայն ավելի համակարգված աշխատանքով աչքի ընկնող մայրաքաղաքային հյուրատների ու ուսանողական ժամանակավոր կացարանների հետ, նրանց հետ միասնական կապակցված ցանցի ստեղծման համար նպաստավոր պայմաններ կստեղծվեն ու կնպաստեն ընդհանուր մակարդակի բարձրացմանը:

Կիրառություն և տևողություն - Սպասարկման ոլորտի առանձին կառույցների կառավարման, հետևաբար և ամբողջ ենթակառուցվածքների որակի բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել մասնավոր ոլորտում ներգրավված կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստում: Ենթակառուցվածքների արագ զարգացմանը կնպաստի նաև զբոսաշրջության ոլորտում փոքր և միջին ձեռնարկությունների գործունեությանը աջակցումը, մասնավորապես ցածր տոկոսադրույքով վարկային միջոցների տրամադրումը:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է սպասարկման որակի բարձրացում, համապատասխանեցում միջազգային պահանջներին

18. Խթանել զբոսաշրջության ոլորտում փոքր և միջին ձեռնարկությունների գործունեությունը, մասնավորապես ցածր տոկոսադրույքով վարկային միջոցների ներգրավմամբ

Նկարագրություն - Դեռևս զարգացման փուլում գտնվող զբոսաշրջության ոլորտը մեծ ֆինանսական ներդրումների կարիք ունի: Միայն պետական հատկացումները բավարար չեն և անհրաժեշտ է մասնավոր ոլորտի նեցկայացուցիչներին շահագրգռել և ներգրավել պետության կողմից խթանիչ քաղաքականության մշակմամբ, մասնավորապես հարկազատման և ցածր տեկոսադրույքներով վարկային միջոցների տրամադրմամբ:

Կիրառություն և տևողություն - Այն էականորեն կնպաստի փոքր մատչելի զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը: Այն անժամկետ է, սակայն դրանց մեկից ավելի տրանշներով հատկացումը կարևոր է դրանց կայունության ապահովման տեսակետից:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է մասնավոր սեկտորի կողմից, պետական աջակցության շնորհիվ, միաժամանակյա խոշորածավալ ներդրումների շնորհիվ ուղի

կանգնացնել զբոսաշրջային զարգացման ոլորտը: Չնայած այն փաստին որ այն դանդաղ զարգացում է ապրում վերջին տարիներին, մասամբ պետական հոգածության, մասամբ ի շնորհիվ Համաշխարհային բանկի և նմանատիպ ծրագրերի, սակայն դրանք հիմնականում խոշոր ներդրումներ են, որոնք չեն ապահովում մատչելի տուրիզմի զարգացմանը, ինչպես նաև ունենում բացասական ազդեցության միջավայրի վրա:

19. Գույքագրել Տարածքում առկա պատմության, մշակութային, ինչպես նաև բնության հուշարձանները՝ օրենսդրությամբ նախատեսված բոլոր գործընթացների իրականացմամբ (անձնագրավորում, պահպանական, կառուցապատման կարգավորման և լանդշաֆտի պահպանության գոտիների ամրագրում)¹²

Նկարագրություն - Տարածքի ընդհանուր մշտադիտարկման արդյունքում մշակութային նյութական և ոչ նյութական արժեքների բացահայտումը, դրանց գույքագրումը, պատմամշակութային հուշարձանների համար ռեգիստրի ստեղծումն ու դրանց հասանելիության ապահովումն մշակութային զբոսաշրջության խթան կհանդիսանան: Դեռևս 1985թ.-ին ՀԽՍՀ մինիստրների խորհրդի կողմից հաստատվել է Դիլիջան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը (հեղինակներ Ավետիսյան, Թելումյան), առաջարկվել է ստեղծել:

- Պատմամշակութային արգելավայր-թանգարան, որը ընդգրկում էր 'Քյարամի քուչա' թաղամասը
- Հուշարձանների խմբային պահպանման գոտի
- Կառուցապատման կարգավորման գոտի
- Բնական լանդշաֆտի պահպանման գոտի
- Պոտենցիալ պեղման գոտի
- Քաղաքի զարգացման ուղիներ՝ Թաղթա և Շամախյան թաղամասերը:

Ու թեև զարգացումը, հիմնականում ընթացել է ըստ ծրագրերի, թվարկված կետերից ոչ բոլորն են կյանքի կոչվել:

Կիրառություն և տևողություն - Դա նպաստելու է հուշարձանների ազդեցության գոտում գտնվող տարածքների խելամիտ կառավարմանն ու զարգացմանը: Դրանք հիմնականում հանդիսանում են օրենսդրական պահանջ, որոնք երբեմն չեն իրացվում լիազորված մարմինների կողմից կառավարման հետ կապված խնդիրների պատճառով:

Ակնկալվող արդյունքներ - Դա նպաստելու է հուշարձանների ազդեցության գոտում գտնվող տարածքների խելամիտ կառավարմանն ու զարգացմանը:

20. Հստակեցնել առկա պատմական արժեքավոր միջավայրերի ու դրանց հարող տարածքների պահպանության իրավունքներն ու լիազորությունները, մասնավոր, պետական ու եկեղեցապատկան տարածքների վերաբերյալ

Նկարագրություն - Պատմական ժառանգությանը վերաբերող հարցերում կարևորվել է առկա պատմական արժեքավոր քաղաքային և գյուղական միջավայրերի ու դրանց հարող տարածքների պահպանության իրավունքների ու լիազորությունների, մասնավոր, պետական ու

եկեղեցապատկան պատկանելիության հստակեցման հարցը: Միայն հստակ տարբերակման դեպքում, հնարավոր կլինի հստակեցնել լիազորությունների ֆիզիկական սահմանները:

Կիրառություն և տևողություն - Կիրառելով նշված միջոցները, հնարավոր կլինի վերհսկողություն սահմանել արժեքավոր միջավայրերի ու առանձին հուշարձանների նկատմամբ: Նախնական տեղեկատվություն հավաքելուց հետո, այն շարունակաբար կհամալրվի մինչև Տարածքում առկա բոլոր հուշարձանները ամրագրվեն ըստ իրենց պատկանելիության: Կարևոր է նաև դրանց վերաբերյալ տեղեկատվական վահանակների տեղադրումը:

Ակնկալվող արդյունքներ - Ըստ պատկանելության հստակեցված տեղանքի “քարտեզով” հնարավորություն կստեղծվի պաշտպանել տարածքների պաշտպանության իրավունքները, վերահսկելի և դարձնել դրաց շահագործումն ու պահպանության ընդառաջ գնալ հուշարձանների պահպանության գործընթացներում ներգրավված սեփականատերերի ֆիզիկական սահմանների հստակեցմամբ: Վերոնշյալ գործողությունների արդյունքում պահպանման ենթակա տարածքները ավելի պաշտպանված վիճակում կգտնվեն: Հավաքագրված տեղեկատվության պայմաններում, ավելի դյուրին կլինի մասնավոր ոլորտից աջակցություն ստանալը՝ պետության կամ եկեղեցու հոգաձության ներքո գտնվող տարածքների պահպանության և զարգացման համար:

21. Ստեղծել (ժամանակավոր) համակարգող մասնագիտական խորհրդատվական միավոր (խորհուրդ, աշխատանքային խումբ, հանձնաժողով և այլն)

Նկարագրություն - Տարածքային ընդգրկմամբ նոր կառավարական միավորի ստեղծմանը կից, առաջարկվում է ստեղծել ժամանակավոր համակարգող մասնագիտական խորհրդատվական միավոր մասնավորապես քաղաքաշինական կայուն զարգացման և տարածքային մշակութային համակարգերի ուղղորման համար: Վերջիններս կհանդիսանան օժանդակող հիմնական կառավարման խմբին և կցուցաբերեն մասնագիտական մոտեցում արագ լուծում պահանջող խնդիրներին:

Կիրառություն և տևողություն - Հանձնախմբերը կստեղծվեն լուծելու համար կոնկրետ ժամանակավոր բնույթի խնդիրներ և կլուծարվեն դրանց բացակայության դեպքում: Ստեղծված խորհրդատվական նոր միավորները կլինեն մասնագիտացված կոնկրետ խնդիրների լուծման վրա ու մասնագիտական մոտեցմամբ: Միավորի կազմում պետք է գերակշռող լինեն տեղի մասնագետները, սակայն ցանկալի է աշխատանքներում ներգրավվել նման աշխատանքային փորձ ունեցող ոչ տեղացի, նաև միջազգային փորձագետներ:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է որ ստեղծված հանձնախմբերը ավելի հստակ լուծումներ կառաջարկեն խնդիրների շուտափույթ լուծման համար և Տարածքում ընթացող գործընթացները կդրվեն որակական նոր մակարդակում միայն ու միայն մասնագիտական համակողմանի քննարկման արդյունքում:

Տարածքին վերաբերող նոր որակական չափանիշների սահմանում

22. Կազմակերպել փողոցային լուսավորություն՝ էներգոխնայողական մոտեցումների կիրառմամբ

Նկարագրություն - Բոլոր համայնքները, և նույնիսկ Դիլիջան քաղաքը չունեն կազմակերպված փողոցային ցանցի լուսավորություն, ինչը տարրական անհրաժեշտության է որակյալ և բարեկարգ միջավայր ունենալու համար: Այն ոչ միայն անապահովության զգացում է առաջացնում տեղաբնակների շրջանում այլ Տարածքը դարձնում պակաս գրավիչ այցելուների համար: Լուսավորության բացակայության պայմաններում, անհնարին է պատկերացնել երեկոյան ժամերին ցանկացած բնույթի ժամանցի կազմակերպումը: Տարածքը դառնում է անհետաքրքիր, հետզհետե նպաստում տեղացիների կապվածությանը իրենց բնօրրանի հետ խզմանը: Կիրառվող լուծումները պետք է համապատասխանեն ժամանակակից պահանջներին հատկապես ուշադրություն դարձնելով էներգախնայող մոտեցումների կիրառման, ինչպիսիք են արևային էներգիայի համադրմամբ լուսավորության սարքեր, էներգախնայող լամպերը ինչպես նաև տվիչներով (սենսոր) հագեցված միացման հնարավորություններ ուշ ժամերին:

Կիրառություն և տևողություն - Նախատեսվում է մշակել լուսավորության նախագիծ ամբողջ տարածքի համար՝ ներառյալ ներբակային տարածքներն ու միջբնակավայրային ճանապարհները: Բավարար ֆինանսավորման դեպքում էներգոխնայողական լուսատուների տեղադրումը երկարաժամկետ արդյունավետության կապահովվի:

Ակնկալվող առաջարկներ - Արդյունքում ակնկալվում է տեղացիների և հյուրերի համար ապահով, քաղաքակիրթ միջավայրի ապահովում, ինչը իր հերթին կնպաստի երեկոյան ժամանցային վայրերի շահագործմանը:

23. Քայլեր ձեռնարկել համայնքներից աղբի տեղահանման կանոնավոր կազմակերպման, աղբի տեսակավորման և վերամշակման համար

Նկարագրություն - Տարածքային սպասարկման առաջնային խնդիրներից է աղբահանությունը, աղբի վերամշակումը ու տեղավորումը: Ներկայումս գործող աղբավայրերը, ինչպես նաև աղբահանության կազմակերպումն չի բավարարում պահանջվող սանիտարական չափորոշիչներին: Խնդրին անդրադարձել են նաև գլխավոր հատակագիծը մշակելիս:

Կիրառություն և տևողություն - Անհրաժեշտ է տեղափոխել գործող աղբավայրը՝ համապատասխան գործող պահանջների: Ոչ մեծ ներդրումները թույլ կտան նաև վերամշակման ոչ մեծ կայանի ստեղծումը: Այն կարելի է դիտարկել ողջ Տարածքի համար մեկ համակարգ ստեղծելով նաև:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է ունենալ ժամանակակից սանիտարատեխնիկական պահանջներին համապատասխան աղբավայրեր՝ բնակավայրերից թույլատրելի հեռավորության վրա և աղբահանության բավարար որակ:

24. Մշակել Տարածքի համար, օրենսդրության շրջանակում պարտադիր, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվական վահանակների և այլ տեսակի ուղեցույցների տեղադրման ծրագիր

Նկարագրություն - Վերջին տարիներին, Տավուշում, ինչպես և ամբողջ Հայաստանում, տեղադրվեցին զբոսաշրջային բնույթի տեղեկատվական վահանակներ և ուղեցույցեր:

Տեղադրվածները միայն հիմնական ուղղություններին և հուշարձաններին են վերաբերում, իսկ պակաս հետաքրքրություն ներկայացնող հուշարձաններն ու տարածքները այդպես էլ մնում են հիմնական երթուղիներից դուրս:

Կիրառություն և տևողություն - Նախատեսվող վահանակները կլինեն տեղեկատվական և ուղղորդող բնույթի և տեղադրված կլինեն ամբողջ Տարածքում, ինչպես նաև դեպի Տարածք և Տարածքից դեպի այլ բնակավայրեր տանող ուղղություններով: Նախատեսվում է դրանց շահագործումը առաջիկա 5-10 տարիների ընթացքում:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է քաղաքակիրթ և մարդամոտ միջավայրի ապավիլում, ինչպես տեղացիների այնպես էլ զբոսաշրջիկների համար, որտեղ կողմնորոշվելը և տարածքով տեղաշարժվելը չի առաջացնի ավելորդ բարդություններ ու անհարմարություններ:

25. Խթանել միայն տեղական շինարարական նյութերի օգտագործումը պետական, համայնքային և մասնավոր շինարարական ու բարեկարգման աշխատանքներում

Նկարագրություն - Կայուն քաղաքաշինական մոտեցումների հիմնարար կետ հանդիսացող այս մոտեցումը նպաստում է տեղական արտադրողների աշխատանքը, բացառում է խոշոր տրանսպորտային տեղափոխությունները՝ դրանով իսկ ծախսերը, աղտոտման խնդիրները, բարձրացնում է որակը ի շնորհիվ տեղական շինարարական տեխնոլոգիաների հետ տեղացի վարպետների աշխատելու ավելի բարձր հմտությանը:

Տեղական շինարարական նյութերի օգտագործումը կնպաստի նաև ավանդական ճարտարապետության ու արհեստի պահպանմանը, ավելի ներդաշնակ կներգծվի գոյություն ունեցող միջավայրում:

Կիրառություն և տևողություն - Կիրառությունը ենթադրվում է ցանկացած ծավալի աշխատանքներում, ինչպես մասնավոր, այնպես էլ պետական ու համայնքային շինարարական ու բարեկարգման աշխատանքներում:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է աջակցել տեղական արտադրությանը, նվազեցնել արտանետումները, պահպանել տեղական ճարտարապետական ավանդույթները և պահպանել գոյություն ունեցող քաղաքաշինական միջավայրը:

26. Ապահովել հետիոտն, հեծանվային և այլ ոչ ավտոտրանսպորտային միջոցներով շարժման երթուղիներ թե՛ գործառնական նպատակներով, թե՛ մարզաառողջարանային զբոսաշրջության զարգացման նպատակով

Նկարագրություն - Ինչպես Դիլիջան քաղաքը, որը ի հաշիվ իր գետի երկայնքով տեղադրության, այնպես էլ գյուղական համայնքները իրենց տարածական ոչ լայն ընգրկմամբ, լայն հնարավորություն են ընձեռում այլընտրանքային երթևեկության միջոցներից օգտվելու համար:

Կիրառություն և տևողություն - Նոր երթուղիները անմիջապես կդրվեն կիրառության մեջ և կազմակերպման համար հատկացված միջոցները կարճաժամկետ արդյունք ցույց կտան՝ թե՛ վառելանյութի ծախսերի խնայողության, թե՛ առողջապահական և թե՛ բնապահպանական

տեսանկյունից, մասնավորապես, որ ներկայումս օդի աղտոտման հիմնական աղբյուրը տարածքում հանդիսանում են ավտոմեքենաների արտանետումները:

Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է, աղտոտման շեմի իջեցում, առողջ ապրելակերպի խթանում, նյութական միջոցների խնայողություն տրանսպորտային տեղախոփությունների համար, Տարածքի ընդհանուր գրավչության բարձրացում էկոլոգոսաշրջության տեսանկյունից:

27. Մշակել գոյություն ունեցող հանրային կանաչ գոտիների բարեկարգման ու նոր տարածքների հիմնման ծրագիր

Նկարագրություն - Տարածքի սահմաններում, թեև շրջապատող անտառածածկ տարածքների առկայության, հանրային օգտագործման կանաչ գոտիները սակավ են: Զգացվում է նաև վերջիններիս բարեկարգման ու նոր տարածքների հիմնման կարիք՝ ամենօրյա հասանելիության սահմաններում՝ երեխաների համար խաղահրապարակներով և ժամանցի կազմակերպման այլ բաղկացուցիչներով:

Կիրառություն և տևողություն - Քաղաքային այգիները, ինչպես նաև գյուղական համայնքներում հանրային գոտիների ստեղծումը աշխուժություն կմտցնի բնակիչների կենսակերպի մեջ՝ նոր շփումների հնարավորություն ստեղծելով: Դիլիջան քաղաքի աշխարհագրական բարդ դիրքով պայմանավորված, նոր տարածքների ներառման փոխարեն, առաջարկվում է արդեն գոյություն ունեցողների բարեկարգում: Ներկայումս անմխիթար վիճակում գտնվող հանրային կանաչ գոտիների բարեկարգումը՝ ներառյալ նախագծային գործընթացները, հնարավոր կլինի կազմակերպել ճամսվա/ամիսների ընթացքում:

•Ակնկալվող արդյունքներ - Ակնկալվում է բարելավվել ընդհանուր օգտագործման հանրային տարածքները, կազմակերպել հանգիստը քաղաքային կամ գյուղական համայնքներում բարձրացմանը: Այդ իր հերթին կնպաստի ընդհանուր տարածքի գրավչության բարձրացմանը ինչպես նաև տեղացիներ ազատ ժամանցի կազմակերպմանը:

Այլ առաջնահերթություններ

28. Ձեռնարկել Մաթոսավանք և Ջուղտակ վանական համալիրների վերականգնման աշխատանքները, համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից՝ ներգրավելով մասնավոր սեկտորը

Նկարագրություն - Դիլիջան քաղաքի վարչական տարածքում գտնվող Մաթոսավանք և Ջուղտակ վանական համալիրները անհապաղ պահպանության գործողությունների կարիք ունեն: Վերջիններս Տարածքում ներառված չորս հիմնական ճարտարապետական հուշարձաններից երկուսն են ներկայացնում և գտնվում են ծայրաստիճան անմխիթար վիճակում:

Կիրառություն և տևողություն - Վերականգնումը, կամ անբավարար միջոցների դեպքում դրա կոնսերվացումը հետագայում վերականգնման համար, պարտադիր կերպով պետք է իրականացվի համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից: Միանվագ ներդրումների դեպքում, ուսումնասիրման, չափագրման, նախագծի պատրաստման և իրականացման

աշխատանքները, բացառությամբ իրականացման ընթացքում չնախատեսված բարդությունների, հնարավոր կլինի ամփոփել 2.5 տարվա ընթացքում:

Ակնկալվող արդյունքներ - Վերականգնված հուշարձանները նյութական ժառանգության պահպանության լավագույն օրինակներ կարող են հանդիսանալ: Այն կխթանի ինչպես արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքի փոփոխությանը, այնպես էլ կծառայի հուշարձանների պահպանությանն ու զբոսաշրջության զարգացմանը:

29.Նպաստել Թեղուտ գյուղական համայնքում գոյություն ունեցող մշակույթի տան վերակենդանացմանը՝ դրանով նպաստելով ոչ նյութական մշակութային արժեքների պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը

Նկարագրություն - Թեղուտ գյուղում երբեմնի գործող մշակույթի տան վերակենդանացումը կնպաստի տեղին բնորոշ, սակայն մոռացության շեմին գտնվող արվեստների ու արհեստների զարգացմանը՝ դրանով իսկ նպաստելով նյութական և ոչ նյութական արժեքների (տոներ, ավանդույթներ) պահպանմանը, զարգացմանն ու արժևորմանը:

Կիրառություն և տևողություն - Նախատեսում ենք, որ շատ կարճ ժամանակում հնարավոր կլինի ներգրավել ոլորտները ներկայացնող մասնագետներին և համախմբել հետաքրքրված երիտասարդությանը գաղափարի շուրջ: Շուրջ կես տարին բավական կլինի առաջին առարկայական արդյունքները ի ցույց դնելու համար և առաջին ներկայացումները կազմակերպելու համար:

Ակնկալվող արդյունքներ - Մշակույթի տան, դրանով իսկ ավանդույթների վերականգնումը թույլ կտա պահպանել ազգային ինքնությունը, և փոխանցել հաջորդող սերունդներին: Արտադրանքը, մասնավորապես գյուղական համայնքներում պատրաստված, նոր եկամտի աղբյուր կհանդիսանա բնակչության համար:

Ավանդական արհեստների զարգացումը, խթան կհանդիսանա նաև զբոսաշրջության համար:

30.Քայլեր ձեռնարկել Դիլիջանի մանկական պատկերասրահի վերանորոգման ուղղությամբ

Նկարագրություն - Տարածքում կան բազմաթիվ արվեստի դպրոցներ, սակայն ցուցադրության հնարավորության բացակայության պայմաններում, հետզհետե կորում են տարածքի համար բնորոշիչ դարձած արվեստների, մասնավորապես նկարչության, կավագործության ու փայտամշակման ավանդույթները: Դիլիջանի մանկական պատկերասրահը

Կիրառություն և տևողություն - Արվեստի դպրոցները վաղուց գործում են Տարածքում և մշտական ցուցադրություն կազմակերպելու համար բավարար նյութն ապահովված է: Փոփոխական ցուցադրությունները, ինչպես նաև ցուցահանդես-վաճառների կազմակերպումը կխթանի երիտասարդ ստեղծագործողներին, կհանդիսանա զբոսաշրջային նոր այցելավայր:

Ակնկալվող արդյունքներ - Պատկերասրահի վերանորոգումը կխթանի Տարածքում դպրոցահասակ երեխաների և պատանիների ընդհանուր գեղագիտական դաստիարակությանը և պայմաններ կստեղծի արվեստագետների նոր սերունդի ձևավորման համար:

5. Ամփոփում

Գործողությունների խմբավորված են երեք հիմնական խմբերում, որոնք կարելի է դիտարկել որ երեք հիմնական չափորոշիչներ (measures) համակարգի կայացման համար: ¹³

- *Հայեցակարգային խնդիրներ*, որի շրջանակում առաջարկվում է հատուկ ուշադրություն դարձնել տարածական պլանավորման փաստաթղթերի մշակմանն ու իրացմանը, մշակել մի շարք հայեցակարգեր տարածքային մշակութային համակարգերի կայացման համար, ապահովելով հանրության ու մասնագիտական հանրույթների մասնակցությունը դրանց մշակման և իրականացման գործում:

- *Տարածքի կառավարմանն առնչվող խնդիրների* լուծման, ինչպես նաև դրանից բխող մի շարք գործառույթների պատշաճ իրականացման, համար առաջարկվում է ստեղծել միավորներներ, իրականացնելու համար համակարգված և միասնական քաղաքականության մշակում և իրականացում: Դրանց թվին են վերաբերում նաև Տարածքին վերաբերող նոր որակական չափանիշների սահմանումը, որն իր հերթին նպաստելու դրա վերաբերյալ միջավայրային ընկալումների փոփոխությանը:

- Ինչպես նաև ներկայացվել են *այլ առաջնահերթություններ*, որոնցում արտացոլվել են Տեղական նախաձեռնող խմբի անդամների կողմից առաջադրված կոնկրետ առաջարկություններ:

Ամփոփելով կարելի է ասել որ Տարածքում առկա խնդիրները բարդ են և պահանջում են համալիր ու ոչ ստանդարտ լուծումներ: Հաշվի առնելով որ Տարածքը ի տարբերություն Հայաստանի այլ տարածքների ունի պետական մակարդակով աջակցություն, ինչպես նաև այն իր կլիմայի պատճառով հանդիսանում է Հայաստանի ամենադինամիկ շրջաններից մեկը:

Վերջինը իր մեջ ներառում է յուրօրինակ հնարավորություն և մարտահրավեր, ի հաշիվ առկա ռեսուրսների ու դրանց սխալ կառավարման վտանգների: Հայաստանի տարածքում ունենալով Ծաղկաձոր քաղաքի զարգացման նախադեպը, այսօր Դիվիզան քաղաքին ու շրջակայքի զարգացման գործընթացների քաղաքաշինական կառավարումը պետք է իրականացվի զգուշավորությամբ:

Չնայած այն փաստին որ գործողություններ ծրագրի շրջանակում առաջադրված քայլերը փորձել են լուծումներ առաջադրել բոլոր խնդիրների ուղղությամբ, սակայն դրանք չեն հավակնում լուծել բոլոր խնդիրները: Դրանք հիմնականում խնդիր ունեն լուծելու մշակութային ժառանգության հետ կապված խնդիրներն ու դրան հետևանք հանդիսացող զբոսաշրջության զարգացման հետ կապված խնդիրները, դիտարկելով դրանք նման դեպքերում կայուն զարգացման գրավական:

Ելնելով առաջադրված գործողություններից ծրագրի մշակման փուլում նախատեսվել է փորձնական (պիլոտային) ծրագրի իրականացում, որոնց վերաբերյալ հավելյալ տեղեկություններ և մանրամասներ ներկայացված հաջորդ գլխում:

5.1. Փորձնական (պիլոտային) ծրագրեր

Փորձնական ծրագիր թիվ 1		
Տարածքում շարժման դյուրինացման ինտեգրված նախագծի մշակում		
Ծրագրի բնութագիրը		
Նկարագրություն	Տարածքում առկա զբոսաշրջային և այլ պատճառներով հետաքրքրություն ներկայացնող կետերի միջև շարժման կազմակերպումը նպաստելու է դրանց հասանելիության, ինչպես նաև գրավչությանը: Այսօր տարածքում առկա են հիմնականում ավտոմոբիլային շարժման համար նախատեսված ճանապարհներ: Վերջին մի քանի տարիներին զարգանում են նաև արշավային շարժման երթուղիները: Տարածքի ներուժի ամբողջական պատկերը հուշում է որ կարելի է զարգացնել անվավոր սարքերի, մասնավորապես հեծանիվի, շարժման, ինչպես նաև ձիերով շարժման երթուղային ցանցերը: Այն ոչ միայն կնպաստի բնապահպանական մի շարք խնդիրների լուծմանը, այլև կապահովի տարածքում զբոսաշրջային ժամանցի ու ենթակառուցվածքների զարգացմանը:	
Իրականացումը	Էկոտուրիզմի ասոցիացիա, Ուրբանլաբ	
Արժեքը	~ 60'000'000 ՀՀԴ / (110'000 EUR)	
Ակնկալվող արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1. Տարածքում առկա հետաքրքրության ներկայացնող կետերի քարտեզագրում 2. Հուշարձանների մատչելիության ապահովում 3. Քաղաքաշինական գործընթացների համար նոր որակական չափանիշների ապահովում 	
Շարունակականությունը	<ul style="list-style-type: none"> ▪ Նման նախագծերի մշակման փորձի առկայության պայմաններում նոր նմանատիպ նախագծերի մշակում ▪ Տարածքում նոր զբոսաշրջային երթուղիներ ստեղծում 	
Փուլերը	Տևողությունը	Պատասխանատու
Նախապատրաստական փուլ	1-2 շաբաթ	Ուրբանլաբ
Հենակետային նյութերի հավաքագրում	2-6 շաբաթ	Ուրբանլաբ
Հայեցակարգի մշակում	3-6 շաբաթ	Ուրբանլաբ
Քարտեզագրում	4-8 շաբաթ	Ուրբանլաբ
Մտքային գրոհներից անցկացում	9 շաբաթ	Ուրբանլաբ
Ճշտումների իրականացում	10-11 շաբաթ	Ուրբանլաբ
Վերջնական տարբերակի քննարկում	12 շաբաթ	Ուրբանլաբ

Ուղեցույցի հրատարակում	12 շաբաթ	Էկոտուրիզմի ասոցիացիա
Տեսանելիության ապահովում	13-15 շաբաթ	Էկոտուրիզմի ասոցիացիա

Փորձնական ծրագիր թիվ 2

Տարածքի համընդհանուր ներկայացուցչական ձևաչափի մշակում (բրենդինգ) և դրա միջոցով քարոզչության իրականացում ֆիզիկական և առցանց (վիրտուալ) ճանաչելիության միջոցներով

Ծրագրի բնութագիրը

<p>Նկարագրություն</p>	<p>Արտաքին գրավչության բարձրացման համար առաջարկվում է Տարածքի ընդհանուր ներկայացուցչական ձևաչափի (բրենդինգ) մշակում՝ ավելի ներկայանանալի, մեկ ընդհանրական, փոխկապակցված գոտու տպավորություն ստեղծելու համար ու բացահայտելու համար տարածքի ընդհանուր գրավչության նախադրյալները՝ հնարավորինս դրանք օգտագործելու և պահպանելու համար: Այն պետք է ներառի նախևառաջ Տարածքի ճիշտ և հակիրճ անվան որոշում, որը պետք է ներառի նաև կարգախոս: Անհրաժեշտ է մշակել նաև Տարածքի համար համընդհանուր գրաֆիկական ներկայացուցչական արտահայտություն՝ տարբերանշանի (լոգոյի) տեսքով: Այն պետք է ներառի արդի պահանջներին բավարարող գրաֆիկական նյութերում դրա կիրառության ձևերի վերաբերյալ ուղեցուց (բրենդ բուք): Դրանում հատկապես պետք է արտացոլեն համացանցում և տպագրական նյութերի կիրառության ձևերն ու ուղղությունները:</p>
<p>Իրականացումը</p>	<p>Էկոտուրիզմի ասոցիացիա Ուրբանլաբ</p>
<p>Արժեքը</p>	<p>~ 15'000'000 ՀՀԴ / (25'000 EUR)</p>
<p>Ակնկալվող արդյունքները</p>	<ol style="list-style-type: none"> 1. Տարածքի ներկայացուցչական ձևաչափի ուղեցույցի (Brand Book) մշակում 2. Տարածքի վերաբերյալ նոր բազմաշերտ քարտեզի պատրաստում 3. Տարածքի վերաբերյալ կայքի պատրաստում 4. Սոցիալական ցանցերում Տարածքի ներկայության ապահովում 5. Տարածքում համընդհանուր լուծումներով ցուցանակների տեղադրում 6. Քարոզչական նյութերի տպագրություն և տարածում 7. Զբոսաշրջային կարգավիճակների տրամադրում 8. Հուշարձանների տարածքում QR ցուցանակների տեղադրում
<p>Շարունակականությունը</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Կայքի զարգացում

	<ul style="list-style-type: none"> ▪ Կայքի առցանց ամրագրման տեղական բաղադրիչի ստեղծում ▪ Տարածքի տեղեկատվական ցուցանակների համալրում ▪ Տարածքի վերաբերյալ քարոզչական արշավների կազմակերպում 	
Փուլերը	Տևողությունը	Պատասխանատու
Նախապատրաստական փուլ	1-2 շաբաթ	Էկոտուրիզմի ասոցիացիա Ուրբանլաբ
Դոմեյնի և հոսթինգի ապահովում	3 շաբաթ	Էկոտուրիզմի ասոցիացիա
Տեքստային բրենդինգ	2-4 շաբաթ	Ուրբանլաբ
Վիզուալ բրենդինգ	3-6 շաբաթ	Ուրբանլաբ
Տեղեկատվության հավաքագրում	3-7 շաբաթ	Ուրբանլաբ
Քարտեզագրում	3-7 շաբաթ	Ուրբանլաբ
Կայքի ձևավորում	6-8 շաբաթ	Ուրբանլաբ
Կայքի պատրաստում	7-12 շաբաթ	Էկոտուրիզմի ասոցիացիա
Սոցցանցերի ինտեգրում	10-14 շաբաթ	Ուրբանլաբ
Քարտեզի տպագրություն	12-15 շաբաթ	Էկոտուրիզմի ասոցիացիա
Բուկլետների տպագրություն	12-15 շաբաթ	Էկոտուրիզմի ասոցիացիա
Ցուցանակների պատրաստում և տեղադրում	12-15 շաբաթ	Էկոտուրիզմի ասոցիացիա
Զբոսաշրջային կարգավիճակների տրամադրում	13-15 շաբաթ	Էկոտուրիզմի ասոցիացիա
QR կոդերի տեղադրում	13-15 շաբաթ	Ուրբանլաբ

Փորձնական ծրագիր թիվ 3

Մանկական արվեստի դպրոցների ցանցի միջոցով ապահովել Տարածքի տարածքային մշակութային համակարգի կայացմանը

Ծրագրի բնութագիրը

Նկարագրություն	Տարածքում կան բազմաթիվ արվեստի դպրոցներ, սակայն ցուցադրության հնարավորության բացակայության պայմաններում, հետզհետե կորում են տարածքի համար բնորոշիչ դարձած արվեստների, մասնավորապես նկարչության, կավագործության ու փայտամշակման ավանդույթները: Դիլիջանի մանկական պատկերասրահը ունենալով երկար տարիներ ավանդույթներ այսօր գտնվում է անմխիթար վիճակում: Այն կարող է իր շուրջ համախմբել տարածքում առկա արվեստի դպրոցները նախ զարգացնել արվեստի ու արհեստների զարգացմանը, ինչպես նաև մանկական տարիքից սերմանել շրջակա լանդշաֆտի արժևորման մտայնությունը:	
Իրականացումը	Էկոտուրիզմի ասոցիացիա	
Արժեքը	~ 1'000'000'000 ՀՀԴ / (1'800'000 EUR)	
Ակնկալվող արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1. Դիլիջանի մանկական պատկերասրահի նորոգում 2. Թեղուտի արվեստի դպրոցի նորոգում 3. Մանկական նկարչական փառատոնի անցկացում 	
Շարունակականությունը	<ul style="list-style-type: none"> ▪ Նոր արվեստի դպրոցների հիմնում ▪ Տարածքում մշակութային կյանքի զարգացում 	
Փուլերը	Տևողությունը	Պատասխանատու
Նախապատրաստական փուլ	1 տարի	Էկոտուրիզմի ասոցիացիա
Դիլիջանի մանկական պատկերասրահի նորոգում	2 տարի	Տեղական ինքնակառավարման մարմին
Թեղուտի արվեստի դպրոցի նորոգում	2 տարի	Տեղական ինքնակառավարման մարմին
Արվեստի դպրոցի հիմնում Գոշ գյուղում	2 տարի	Տեղական ինքնակառավարման մարմին

Արվեստի դպրոցի հիմնում Հաղարծին գյուղում	2 տարի	Տեղական ինքնակառավարման մարմին
Արվեստի դպրոցի հիմնում Հովք գյուղում	2 տարի	Տեղական ինքնակառավարման մարմին
Մանկական նկարչական փառատոնի անցկացում		Համայնքների միություն

Գրականության ցանկ

- ¹ ՀՀ Լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթները
- ² ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին օրենք
- ³ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի նախագիծ
- ⁴ Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը և քաղաքի պատմական տարածքի, նրա առանձին հատվածների վերակառուցման և օգտագործման ծրագրի հայեցակարգ
- ⁵ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Հաղարծնի գյուղական համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծ
- ⁶ Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992
- ⁷ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2009-2012թվականների քառամյա զարգացման ծրագիր
- ⁸ ՀՀ օրենքը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին
- ⁹ Դիլիջան քաղաքային համայնքի ռազմավարական պլանավորում 2012-2022թթ.
- ¹⁰ Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա
- ¹¹ ՀՀ կարգը զբոսաշրջային կենտրոններում քաղաքաշինական գործունեության իրականացման մասին
- ¹² Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագրի հաշվետվություն
- ¹³ Tangible Cultural Heritage: Context of Armenia, By Sarhat Petrosyan

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ց ՈՒ Ց Ա Կ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ
 ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ**

10. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ *

10.1 ԴԻԼԻՋԱՆ քաղաք

1	2	3	4	5	6	7	8	9
1.				ԱՄՐՈՑ «ԲԵՐԴԻ ՂԱՇ»	Ք.ա. 2-1 հազ., միջնադար	Հաղարծնի վանքից 2 կմ ամ, երկու ձորերի միջև, բլրի վրա, «Բոխտու թումբ» վայրում	<	ավերված է, պահպանվել են պարիսպների հիմքերը
	1.1.			Բնակատեղի	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցիկ հվ և ատ	<	
	1.2.			Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	բնակատեղիի մոտ	<	ավերված է
2.				ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2-1 հազ.	Գողովինո թաղամասից հս, ԴՕՍԱԱՖ-ի շենքից 1.5 կմ հեռու, բլրի հվ-ատ հարթակում	<	ավերված է
	2.1.			Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	բնակատեղիի տարածքում և մերձակայքում	<	ավերված է
3.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1911 թ.	Աղայան փող. 2	<	երկհարկ, կառուցել է Մ. Սաղաթեյանը
4.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1882 թ.	Աղայան փող. 3	<	երկհարկ, կառուցել է հյուան Ա. Պետրոսյանը
5.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. վերջ	Կալինինի փող. 5	<	Եղել է իշխանուհի Մարիամ Թումանյանի ամառանոցը: 1979-ից՝ ժողովրդական արվեստի թանգարանի Դիլիջանի մասնաճյուղի շենք
6.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1945 թ.	Կալինինի փող. 6	<	
7.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1940 թ.	Կալինինի փող. 7	<	
8.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1934 թ.	Կալինինի փող. 8	<	
9.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1925-1930 թթ.	Կալինինի փող. 10	<	երկհարկ
10.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. վերջ	Կալինինի փող. 11	S	
11.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1908 թ.	Կալինինի փող. 12	<	երկհարկ
12.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1897 թ.	Կալինինի փող. 15	S	
13.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1927 թ.	Կալինինի փող. 18	<	երկհարկ
14.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1920 թ.	Կալինինի փող. 19	S	
15.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1957 թ.	Կալինինի փող. 20	<	
16.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1918 թ., 1960 թ.	Կալինինի փող. 22	<	երկհարկ
17.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1919 թ.	Կալինինի փող. 25	S	
18.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1796 թ.	Կալինինի փող. 26	S	
19.				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. սկիզբ	Կալինինի փող. 28	<	երկհարկ

20.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1832 թ.	Կալինինի փող. 34	<	երկհարկ
21.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. 1-ին կես	Կալինինի փող. 37	S	
22.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. 1-ին կես	Կալինինի փող. 41	S	
23.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1842 թ.	Կալինինի փող. 42	S	
24.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1830 թ.	Կալինինի փող. 43	S	
25.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1893 թ.	Կալինինի փող. 45	S	
26.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1850-ական թթ.	Կալինինի փող. 48	S	
27.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. 2-րդ կես	Կալինինի փող. 52 ա	S	
28.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1830-ական թթ.	Կալինինի փող. 53	S	
29.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1880-ական թթ.	Կալինինի փող. 56	S	
30.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1880 թ.	Կալինինի փող. 60	S	
31.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	18 դ. վերջ	Կալինինի փող. 66	S	
32.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1905 թ.	Կալինինի փող. 72	S	
33.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1860 թ.	Կալինինի փող. 78	S	
34.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1930-ական թթ.	Կալինինի փող. 88	S	
35.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1870 թ.	Կալինինի փող. 98	<	երկհարկ
36.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1872 թ.	Կալինինի փող. 110	<	երկհարկ
37.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1901 թ.	Կալինինի փող. 126	<	երկհարկ
38.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1937 թ.	Կալինինի փող. 135	<	
39.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. 50- ական թթ.	Կալինինի փող. 162	S	
40.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	20 դ. սկիզբ	Կալինինի փող. 168	S	
41.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1880-ական թթ.	Կալինինի փող. 170	S	
42.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1890 թ.	Կալինինի փող. 184	S	
43.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. 1-ին կես	Կալինինի փող. 188	S	
44.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1910 թ.	Հակոբջանյան փող. 15	<	երկհարկ, կառուցել է Ն. Պողոսյանը
45.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1910 թ.	Հակոբջանյան փող. 19	S	
46.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1917 թ.	Հակոբջանյան փող. 21 ա	<	Ֆրանգույանների տունը
47.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1908 թ., 1959 թ.	Հակոբջանյան փող. 23	<	երկհարկ, կառուցել է Ա. Սիմոնյանը
48.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1920 թ.	Հակոբջանյան փող. 28	S	
49.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1926 թ.	Հակոբջանյան փող. 31	<	միահարկ, կառուցել է հյուսն Ե. Սիմոնյանը
50.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1882 թ.	Հակոբջանյան փող. 32	<	երկհարկ, կառուցել է Բ. Ֆրանգույանը
51.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1890-ական թթ.	Հակոբջանյան փող. 34	S	
52.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1916 թ.	Հակոբջանյան փող. 36	S	երկհարկ, կառուցել է Բ. Ֆրանգույանը
53.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1912 թ.	Հակոբջանյան փող. 52	<	
54.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1882 թ.	Մանթաշյան փող. 3 գ	<	երկհարկ, կառուցել է Դիլիջանի տանուտեր Մովսես Հովհաննիսյանը
55.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1860 թ.	Մանթաշյան փող. 4	S	
56.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1894 թ.	Մանթաշյան փող. 6	<	երկհարկ, կառուցել է սայլագործ Հ. Հակոբյանը

57.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1890 թ.	Մյասնիկյան փող. 32	<	երկհարկ, կառուցել է Տ. Բաղայանը
58.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1890 թ.	Մյասնիկյան փող. 34	<	երկհարկ, կառուցել է Դ. Ուլիխանյանը
59.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1870-ական թթ.	Մյասնիկյան փող. 38	<	երկհարկ, վաճառական Ասլանովների տունը
60.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1895-1897 թթ.	Մյասնիկյան փող. 50	<	եղել է ցարական դատարանի շենքը
61.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ («ԴԱԼԼԱՔԻ ՏՈՒՆ»)	19 դ. վերջ	Մյասնիկյան փող. 54	<	երկհարկ, կառուցել է սափրիչ Սիմոնը. առաջին հարկում եղել է վարսավիրանոց
62.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. վերջ	Մյասնիկյան փող. 56	<	երկհարկ
63.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ («ԼԵԶԳՈՒ ԿԱՄ ՓՈՒՆՉՈՑ ՏՈՒՆ»)	19 դ. կես	Մյասնիկյան փող. 58	<	երկհարկ
64.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1850-1860-ական թթ.	Մյասնիկյան փող. 82	<	երկհարկ
65.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1894 թ.	Մյասնիկյան փող. 86	<	երկհարկ
66.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1910 թ.	Մյասնիկյան փող. 88	S	
67.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1930 թ.	Մյասնիկյան փող. 102	<	երկհարկ, կառուցել են Պողոսյանները
68.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1925 թ.	Մյասնիկյան փող. 102ա	<	երկհարկ, կառուցել են Պողոսյանները
69.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1930 թ.	Մյասնիկյան փող. 102բ	<	երկհարկ, կառուցել են Պողոսյանները
70.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1925 թ.	Մյասնիկյան փող. 104	<	երկհարկ, նկուղային մասը կառուցվել է 1873 թ.
71.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	20 դ. սկիզբ	Մյասնիկյան փող. 110	S	
72.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1933 թ.	Մյասնիկյան փող. 112	S	
73.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1948 թ.	Մյասնիկյան փող. 118	<	
74.			ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1880 թ., 1900 թ.	Օրջոնոկիձեի փող. 1	<	երկհարկ, կառուցել են Ալիխանյանները
75.			ԳԵՐԵԶՄԱՆՈՅ	19-20 դդ.	Մանթաշյան փող.	S	
76.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	7-13 դդ.	քաղաքից 7 կմ ատ, Աղստևի աջ ափին, Պարզ լիճ տանող ճանապարհի ձախ կողմում, «Բոյնի դար» վայրում	<	ավերված է, տարածքի մի մասի վրա կառուցվել է կինոգործիչների հանգստյան տունը
	76.1.		Գերեզմանոց	7-13 դդ.	գյուղատեղիի ատ եզրին	<	ավերված է, խաչքարերից մի քանիսը տեղափոխել են նույն հանգստյան տան տարածք
	76.2.		Եկեղեցի	12-13 դդ.	գյուղատեղիի կենտրոնական մասում	S	պահպանվել են հիմքերը
77.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	7-15 դդ.	քաղաքից 3 կմ հվ-ատ, Աղստևի աջ ափին, անտառում, «Բախտիար» գյուղատեղիից մոտ 2 կմ ամ, «Ղալվա» վայրում	<	ավերված է
	77.1.		Գերեզմանոց	7-10 դդ.	գյուղատեղիի հվ-ամ եզրին	<	
	77.2.		Գերեզմանոց	7-13 դդ.	գյուղատեղիի ատ մասում	<	
	77.2.1.		Խաչքար թևավոր	12-13 դդ.		<	տեղահանված է, հենած է ծառին
78.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	7-20 դդ.	քաղաքի ամ մասում, Երևան-Դիլիջան մայրուղուց աջ, «Խրտանոց» վայրում	<	ավերված է
	78.1.		Խաչքար թևավոր	13 դ.		<	արձանագիր է, կտրված է վերին խաչաթևը
79.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	10-14 դդ.	քաղաքից 5 կմ հս-ատ, Դիլիջան-Իջևան մայրուղուց ձախ, «Փիշիկ» և	S	տարածքն ընկած է կառուցապատման

					«Գոմածոր» տանող ճանապարհի վրա		տակ
80.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	10-15 դդ.	քաղաքից 4 կմ հս-աե, «Փիշիկ» գյուղատեղիից 1 կմ հվ-ամ, «Գոմածոր» տանող ճանապարհին	<	ավերված է
	80.1.		Գերեզմանոց	10-15 դդ.		<	ավերված է
		80.1.1.	հաչքար	11 դ.		<	ընկած է
		80.1.2.	հաչքար	12 դ.		<	վերնամասը բացակայում է
		80.1.3.	հաչքար	13 դ.		<	
		80.1.4.	հաչքար	13 դ.		<	արծանագիր է, ստորին մասը կոտրված է
		80.1.5.	հաչքար	13-14 դդ.		<	
		80.1.6.	հաչքար	13-14 դդ.		<	
		80.1.7.	հաչքար	14-15 դդ.		<	
		80.1.8.	հաչքար	14-15 դդ.		<	
81.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	10-15 դդ.	քաղաքից 6 կմ հս-աե, «Փիշիկ» գյուղատեղիից 1 կմ հս-ամ, «Գոմածոր» տանող ճանապարհի երկու կողմում	<	ավերված է
82.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	10-18 դդ.	Պարզ լճից 300 մ հս, «Ղազար բեկ» վայրում	<	
	82.1.		Գերեզմանոց	12-14 դդ.	բլրալանջին	<	ավերված է
